Azg
Ազգ
20 ՅՈՒՆԻՍ 2008 ՈՒՐԲԱԹ 117 (4011)

Եւս մեկ զոհ հայ-ադրբեջանական սահմանում

Պաշտպանության նախարարության մամուլի ծառայությունից հաղորդում են, որ հունիսի 18-ի երեկոյան, Տավուշի մարզի Չինարի գյուղի բնակիչ, 1958 թ. ծնված Ռաֆիկ Արայուլայի Սողոյանի վրա, գյուղատնտեսական աշխատանքներ իրականացնելիս, գերիշխող բարձունքների վրա գտնվող հակառակորդի հենակետից դիտավորյալ կրակ է բացվել խոշոր տրամաչափի զենքից, ինչի հետեւանքով վերջինս մահացել է:

Բրյուսելում քննարկվում է ղարաբաղյան հարցը

ԵԱՀԿ Մինսկի խմբի ֆրանսիացի համանախագահ Բեռնար Ֆասիեն Բրյուսելում հանդիպումներ է անցկացնում Եվրամիության պաշտոնաթող անձանց հետ:

Ինչպես հաղորդում է ԱՊԱ-ն, հանդիպումներում քննարկվում է ղարաբաղյան հակամարտության կարգավորման գործընթացը: Ֆրանսիացի միջնորդը քննարկումներ կանցկացնի նաեւ հունիսի վերջին՝ համանախագահների Հայաստան եւ Ադրբեջան սպասվող այցի առնչությամբ, հաղորդում է «Նոյյան տապանը»:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄԹՆՈԼՈՐՏ

Ատելություն-Օրվա կարգախոսը

ԱՐՄԵՆ ՄՈՒՇԵՂՅԱՆ

Սա թերեւս այսօր սպասվելիք հավատի հիմնական կարգախոսը լինի: Զարմանալու կամ վախենալու ոչինչ չկա: Նորություն չէ, որ թշնամությունն ու ատելությունը դարձել են Հայաստանում առկա հաղարկան պայքարի հիմնական զենքը: Այսօր թե՛ իշխանություններն իրենց գործողություններով եւ թե՛ լեւտնական ընդդիմությունն իր քարոզներով միմյանց հանդեպ քարոզում են մի սկզբունք՝ անհանդուրժողականություն ու ատելություն: Միմյանց ոչնչացնելու, դիմացինի կարծիքը չհարգելու եւ չընդունելու ձեւաչափը ամենատարածվածն է մեր օրերում, մեկը դա քարոզում է, մյուսը՝ իրագործում: Իսկ Հայաստանի սովորական քաղաքացին, որն այս ամենին միայն կողից է նայում ու առանձնապես վստահություն չունի թե՛ մեկի եւ թե՛ մյուսի հանդեպ, չի իմանում, թե ինչ անի: Կամ էլ վարակվում է ատելության նույն մոլուցքով եւ ուզում միայն մի բան՝ կամ, այսպես կոչված, հեղափոխություն, թեւած, թե դա հանի մարդու կյանք կարժենա, կամ, որ ջարդեն այդ հեղափոխականների հիմնարկները, նույնպես առանց երկար մտածելու դրա հետեւանքների մասին: Բոլորն էլ խոսում են ժողովրդավարության, մարդու իրավունքների, մամուլի ազատության մասին, բայց իրականության մեջ այս հասկացությունները հավասարապես ատելի են նրանց համար: Սակայն այսօր ստեղծված իրավիճակի պատասխանը այն է, որ ներկա իշխանությունների եւ լեւտնական ընդդիմության համար միմյանց գոյությունը հույժ անհրաժեշտ է: Ատելության քարոզով եւ գործունեությամբ վերջիններիս հաջողվել է հնարավորինս բեւեռացնել հաղարկան դաշտը, որտեղ բարիկադների տարբեր կողմերում հավաքվել են միմյանց նկատմամբ ատելությունն «ջնջող» հաղարկան ուժեր: Այսինքն՝ երկու կողմերին էլ ձեռնտու է հաղարկան դաշտը մարել այլ կոնակցություններից եւ ուժերից ու սեփական գոյությունը փորձել արդարացնել միմիայն դիմացինի գոյությամբ: Հանդուրժողականությունը, դիմացինի կարծիքը լսելը կամ, առավել եւս, նրան տեղ տալը, բեւեռներում գտնվող հաղարկան ուժերի միայն ինքնաջնջ է առաջացնում: Հասկանալի է, որ նորմալ հաղարկան զարգացումների պայմաններում Հայաստանում չէին կարող երկար գոյություն ունենալ թե՛ այսօրվա իշխանական «պետտրնժդեականները» եւ թե՛ Լեւտնի գաղափարական կողմնակիցներն իրենց հայացքների հաստող ազգային գաղափարաբանությամբ:

Տես էջ 8

ՀԱՄԱՌՈՏ

«Ադրբեջանի զիջումը կլինի ինքնավարության ամենաբարձր կարգավիճակ»

«Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը կապահովվի: Եվ այդ հարցի լուծման մեջ մեր զիջումը Լեռնային Ղարաբաղին ինքնավարության ամենաբարձր կարգավիճակի տրամադրումն է»: Այս մասին, ըստ «Նոյյան տապանի», հայտարարել է Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւը Միլլի մեջլիսի 90-ամյակին նվիրված խորհրդարանի հատուկ նիստում: «Ղարաբաղյան հակամարտությունը սպառնալիք է ոչ միայն Ադրբեջանի, այլեւ ողջ տարածաշրջանի համար: Ադրբեջանը հաջողություններ է հասել բոլոր բնագավառներում, մեր կողմից է եւ միջազգային իրավունքը: Հավատում եմ, որ խնդիրը կլուծվի խաղաղ ճանապարհով», ավելացրել է նա:

Սերժ Թանգյանը սատարում է Բարաք Օբամային

System of a Down հանրահայտ խմբի նախկին ղեկավար Սերժ Թանգյանը հայտնել է, որ ԱՄՆ-ում ատենը կայանալիք նախագահական ընտրություններում սատարելու է դեմոկրատների թեկնածու Բարաք Օբամային, հաղորդում է «Ազատություն» ռադիոկայանը: Ամերիկահայ երաժիշտը այս հայտարարությունն արել է Մոսկվայում, որտեղ տոու է կազմակերպել իր առաջին անհատական ալբոմը գովազդելու նպատակով: Բարաք Օբաման օրերս վերահաստատել է, որ նախագահ դառնալու դեպքում ճանաչելու է Հայոց ցեղասպանությունը:

Ինքնահրկիզման փորձը կառավարության շենքի առջեւ կանխվեց

Կառավարության շենքի առջեւ երեկ արդեն ավանդական դարձած բողոքի գործողություններն էին անցկացնում մի հանի տասնյակ մարդիկ՝ յուրաքանչյուրն իր խնդիրներով: Նրանցից մեկը՝ Դալվայի այգիներում վարձակալներից Սամվել Մանուկյանը որոշել բողոքի նշան, ամբողջությամբ բենզինով թրջված, փորձում էր ինքնահրկիզվել: Սակայն կառավարության շենքի պահպանությունն իրականացնող ոստիկանները կարողացան կանխել այդ ողբերգությունը: Երբ ոստիկանները ցանկանում էին մեկուսացնել Սամվել Մանուկյանին՝ ինքնահրկիզումը թույլ չտալու համար, «Ժառանգության» պատգամավոր Զարուհի Փոստանջյանը եւ ՀՀՇ-ական շրջանակները ներկայացնող եւս մեկ-երկու ակտիվիստներ, որոնք սովորաբար միասին պատասխան են նման միջադեպերն իրենց քաղաքական շահերին ծառայեցնելու, գոյությունները խոչընդոտում էին ոստիկաններին: Կարելի է պատկերացնել, որ եթե մարդը

ԼՈՒՍԱԼՈՒԹ

ինքնահրկիզվեր, դա ինչ ուժախություն կպատճառեր նրանց: Այդուհանդերձ, այս անգամ մարդու կյանքը փրկվեց եւ նոր ուժախության առիթ ՀՀՇ-ականների համար չեղավ:

Ա. Մ.

Մանկավարժական համալսարանի ռեկտորը վերընտրվեց

Երեւանի «Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան» ՊՈԱԿ-ի ռեկտորի պատասխանում ընտրվել է Արտուշ Դուկասյանը: Այս մասին ՀՀ կառավարության այսօրվա նիստում նեց ՀՀ կրթության եւ գիտության նախարար Սպարսակ Սեյրանյանը՝ ներկայացնելով մրցույթի արդյունքները, որոնք ՀՀ կառավարությունը հավանության արժանացրեց: ՀՀ կրթության եւ գիտության նախարարին հանձնարարվեց ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Ա. Դուկասյանի հետ կնքել աշխատանքային պայմանագիր՝ 5 տարի ժամկետով, հաղորդում է Արմենպրեսը:

Հերթական ցույցը կառավարության շենքի մոտ

«Ժամանակ Երեւան» թերթի խմբագիր Արման Բաբաջանյանին, «Հայրենիք ու պատիվ» կուսակցության վարչության անդամ Վարդան Մալխասյանին, ազատամարտիկ Վահան Արոյանին եւ մարտի 1-ի գործով կալանավորվածներին ազատ արձակելու կոչով հունիսի 19-ին ՀՀ կառավարության շենքի մոտ բողոքի ցույց էին կազմակերպել հանրաժողովրդական շարժման մի խումբ մասնակիցներ: «Եսխով, Ա. Բաբաջանյանը քաղաքական բանտարկյալ է», «Երկու տարի պարոնի անազատություն. մինչեւ ե՞րբ...» գրությամբ պաստառներով ցուցարարները շուրջ մեկ ժամ վանկարկում էին «Թալանչիներ», «Գողեր», «Ազատություն»: Ակցիային մասնակցում էին «Ազատագրված տարածքների պատասխանատվություն» նախաձեռնության համակարգող, Շուշիի առանձնակի գումարտակի հրամանատար Ժիրայր Սեֆիլյանը, Ազգային ժողովի «Ժառանգություն» խմբակցության անդամներ Զարուհի Փոստանջյանը եւ Անահիտ Բախչյանը:

Վաղվա «Ազգ. Մշակույթ-Հավելվածում»

Մոսկվայում եւ Գյումրիում այս տարի տեղի ունեցած արվեստաբանությանը վերաբերող երկու կոնֆերանսների անդրադարձը՝ երաժշտագետ Սվետլանա Սարգսյանի նյութում:

Վիլյամ Սարոյանի ծննդյան 100-ամյակի առիթով Գրիգոր Աճեմյանը ներկայացնում է պատառիկներ հիշողությունից: Արվեստաբան Հրաչուհի Հակոբյանի անդրադարձը Շահեն Խաչատրյանի նկարահանվածքության ազգանվեր գործին՝ վերջերս նրա հեղինակած «Թանգարանի զինվորը» գրքի առիթով: Բեյրութահայ նկարիչ Գրիգոր Նորիկյանի առաջին տպավորությունները Հայաստանից: Մելանյա Բաղալյանի զրույցը նկարչի հետ:

Գերմանաբնակ հայազգի ճարտարապետ, հին կառույցներն արդիականացնելու վարպետ Ալբերտ Սեփնյին ներկայացնում է Անահիտ Հովսեփյանը: Գրքերի տեսության խորագիրը շարունակում է Հայյա Սարիբեկյանը: Կերպարվեստի նշանավոր գործերի գողությունների մասին է Հակոբ Ծուլիկյանի հրապարակումը, ըստ ARTnews ամսագրի:

Հեռակա բանավեճ «Գիտանի» հրատարակչության հետ՝ դասական գրականության սեղմավեպ-տարբերակի մասին. թատերագետ Վարսիկ Գրիգորյանի արձագանքը:

Հայկ Հարությունյանը պետական պահպանության ծառայության պետ

Ինչպես հաղորդում են նախագահի մամլո գրասենյակից, Հայաստանի ոստիկանության նախկին պետ Հայկ Հարությունյանը նշանակվել է պետական պահպանության ծառայության պետ, նշանակման հրամանագիրը նախագահ Սերժ Սարգսյանը ստորագրել է հունիսի 18-ին: Այդ պաշտոնը նախկինում ղեկավարում էր Գրիգորի Սարկիսյանը:

ՀՀ պաշտպանության նախարարության նորակառույց շենքը կշահագործվի սեպտեմբերի 21-ից

ՆԱԻՐԻ ՄՈՒՐԱԴՅԱՆ

ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը երեկ այցելեց պաշտպանության նախարարության նորակառույց շենք՝ շինարարական աշխատանքներին ծանոթանալու: Գերագույն գլխավոր հրամանատարի այցը շինություն առաջինն էր իր պաշտոնավարման ընթացքում: Կարիտաս շինարարության եւ զորքերի բնակարանավորման վարչության պետը տեղեկացրեց, որ շենքում արդեն իրականացվել է աշխատանքների 95 տոկոսը: Պաշտպանության նախարարը իր հերթին զեկուցեց նախագահին, որ մինչեւ այս տարվա սեպտեմբերի 21-ը կավարտվեն շինարարական աշխատանքները եւ անձնակազմը ամբողջությամբ կտեղաբաշխվի տվյալ ղեկավարման կետում: Երկրի ղեկավարը պաշտպանության նախարարի հետ շրջեց շինության ներսում, որից հետո փակ խորհրդակցության հրավիրեց զինուժի բարձրաստիճան սպայակազմի անդամներին:

ARMENPRESS

Տես էջ 2

Վարչապետի 4 հայտարարությունները

Ստեղծվում է եկամուտների վարչարարության նոր մշակույթի ներդրման բարշրագույն խորհուրդ

Լրագրողների հետ երեկ տեղի ունեցած հանդիպման ժամանակ Հայաստանի վարչապետ **Տիգրան Սարգսյանը** չորս հայտարարություն արեց: Մինչ այդ նա հիշեցրեց 20 օր առաջ հանրաքվեության նախագահի հրավիրած ֆինансկան ժամանակ հայտարարեց ՀՀԿ խորհրդարանական խմբակցության անդամ **Արմեն Ասոյանը**: Նա բանավիճելու էր եկել «Հանձնաժողովական» շարժման անդամ **Կարապետ Ռուբինյանի** հետ «Փոփոխությունների ճանապարհը. բարեփոխումներ վերևից, թե՞ փոփոխություններ ներքևից» թեմայով ֆինանսկանը, որին մասնակցում էին նաև Գեղարքունիքի խորհրդի նախկին պատգամավորներ **Հրանտ Խաչատրյանը** եւ **Արամ Մայիլյանը**, ԵՊՀ դասախոս **Գարիկ Քեռյանը** եւ այլ հյուրեր:

Հանդիպման երկու հիմնական զեկուցողների՝ Կարապետ Ռուբինյանի եւ Արմեն Ասոյանի զեկուցումներն ու մեթոդը տարբերվեց հակադրակն էին, ինչպես ավանդաբար լինում է իշխանական եւ ընդդիմադիր գործիչների հանդիպման ժամանակ: Ասենք ասում են, որ նիշն իրենք են, իրենց առաջարկած ծրագրերն անփոխարինելի են, սակայն որեւէ մեկի կրքոտ ելույթն ու բարձրագույն խոսքերը կամ լուսեն երկրի զարգացածության իրական մակարդակի հետ, բոլորս էլ գիտենք իրականությունն ինչ է:

Աժ նախկին փոխխոսնակ Կարապետ Ռուբինյանը նշեց, թե հանրաքվեն մի նոր փուլ է սկսելու իրենց հանձնաժողովական պայքարի համար: Նրա խոսքով, ամենալավ տարբերակն այն կլինի, որ իշխանությունները նախաձեռնությունը վերցնեն իրենց ձեռքը եւ կատարեն առաջանցիկ քայլեր բարեփոխումներ կատարելու ուղղությամբ: Ինչ վերաբերում է ներքաղաքական իրավիճակի լարվածությանը, Ռուբինյանի համոզմամբ, նոր ընտրություններն են միակ ելքը. «Լավ կլինի՝ իշխանություններն ընդունեն, որ ընտրությունները կեղծվել են, համերաշխության մթնոլորտում երկխոսության ճանապարհով ֆինансկեն ընտրությունների գնալու ելքը, եւ դա միանգամից կթուլացնի իրավիճակի լարվածությունը»:

Կարապետ Ռուբինյանն ընդգծեց, թե ինքն ուրախ կլինի, եթե իշխանությունները կարողանան ժողովրդին զարմացնել իրենց ժողովրդավարությամբ, իսկ եթե նման քայլի նրանք չկարողանան գնալ, ապա ժողովրդին մնում է ներքևից պայքարով սեղմել, որ փոփոխություններ լինեն: «Հանձնաժողովական» շարժման ներկայացուցիչը նշեց, որ իրենց պայքարն արդեն իսկ տվել է պտուղներ՝ իշխանությունները վարչապետ նշանակեցին Տիգրան Սարգսյանին եւ ոչ թե քրեական մի տարրի, սեղմված, թե սեփական ցանկությամբ, բայց կատարում են ժողովրդահաճո քայլեր:

Հանձնաժողովական շարժման հեղափոխությունը երբեմ չիրականացող որակեց ՀՀԿ-ական պատգամավոր Արմեն Ասոյանն ու հավելեց, որ շարժման պայքարը երկրին ոչ մի լավ բան չի տվել՝ հեռանքից բացի. «Փոփոխության իմաստն առաջընթացն է, իսկ ընդդիմության առաջարկը Հայաստանին չի նշանակում առաջընթաց, այլ հետընթաց: Կիսաս, չիրականացած եւ երբեւէ չիրականացող հեղափոխությունն արդեն իսկ Հայաստանին բերեց վնասներ երկրի տարբեր բնագավառներում»:

Ասոյանը համոզված է, որ մարտի 1-ի դեպքերի հիմքը դրվել է նախորդ տարվա սեպտեմբերի 21-ին՝ «Արմենիա-Մարիոթ» հյուրանոցից, եւ մարտյան դեպքերը այդ օրվա տրամաբանական շարունակությունն էին (հիշեցնենք, որ 10 տարվա լռությունից հետո Լեւոն Տեր-Պետրոսյանն այդ օրն առաջին անգամ հայտնվեց հասարակության առջեւ):

ՀՀԿ խորհրդարանական խմբակցության ներկայացուցիչը նշեց, որ ֆանդում, կազմաձևդում առաջարկող հեղափոխությունը չի կարող զարգացում առաջարկել, մինչդեռ հեղափոխությունների շնորհիվ պետությունները թռիչքաձեւ անցում են կատարում դեպի լավ կազմակերպված հասարակություն: Իշխանության ներկայացուցիչը ավելացրեց, որ Հայաստանի նորագույն պատմության մեջ հեղափոխություն եղել է Արցախի հարցում, սակայն դրանից հետո զարգացում չի եղել, որովհետեւ «հեղափոխությունը խժռեց իր հերոսներին», իսկ 98-ից հետո երկիրը սկսել է զարգանալ:

Պատասխանվարման 100 օրը դեռ չբոլորած նախագահից, Ասոյանի կարծիքով, անհնար է մեծ հաջողություններ պահանջել, սակայն միտումներ կարելի է արձանագրել, որոնք դրական են:

ԳՈՏԻՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Երրորդ հայտարարությունը վերաբերում է կարեւորագույն առաջնահերթություններից մեկին՝ փոքր եւ միջին բիզնեսի զարգացման համար առավել նպաստավոր պայմաններ ստեղծելուն: «Այդ նպատակով մենք հայտարարում ենք, որ փոքր եւ միջին բիզնեսի զարգացման տարածքային կենտրոնները, որոնք բոլոր մարզերում գործում են, աջակցելու են փոքր ու միջին բիզնեսին՝ նաեւ հարկային եւ մաքսային վարչարարության ծրագրերը ներդնելու գործում: Սա նշանակում է, որ էլեկտրոնային կամ հեռախոսային այն հաստներով, որ մենք տրամադրելու ենք փոքր ու միջին բիզնեսի ներկայացուցիչներին, նրանք կարող են օգտվել այդ կենտրոնների ծառայություններից եւ այսուհետեւ այդ կենտրոնները նաեւ խորհրդատվություն ու տեղեկատվություն են տրամադրելու նրանց՝ մեր բարեփոխումների տրամաբանության մասին, ինչպես նաեւ օժանդակելու են փոքր եւ միջին բիզնեսին: Մասնավորապես, հիմնական սկզբունքները հետեւյալն են՝ վարչարարությունը փոքր եւ միջին բիզնեսի ոլորտում մենք հասցնելու ենք նվազագույնի: Օժանդակությունը, այդ թվում՝ նաեւ հատանելի վարկերի ձեւով, հասցնելու ենք առավելագույնի: Եվ երրորդը՝ ստեղծելու ենք այնպիսի միջավայր, որ հարկային մարմինների հետ փոքր եւ միջին բիզնեսի շփումներն իրականացնեն մասնագիտացված կառույցներ, որոնց ծառայությունների գների նվազման ուղղությամբ կառավարությունը ձեռնարկելու է լրացուցիչ լուրջ միջոցառումներ»:

Վարչապետի չորրորդ հայտարարությունը, որը նա ամենակարեւորն է համարել, այն է, որ նա խնդրել է զանգվածային լրատվական միջոցների եւ հանրության աջակցությունը, որպեսզի այդ բարեփոխումներն իրականություն դառնան:

Ա. Մ.

Ընդդիմության հեղափոխությունը երբեմ չի՞ իրականանա

«Ընդդիմության առաջարկած ճանապարհն ավելի վատ է, քան այն խորդուբորդ ճանապարհը, որով անցնում է իշխանությունը», երեկ Մամուլի ազգային ակումբում հրավիրված ֆինանսկան ժամանակ հայտարարեց ՀՀԿ խորհրդարանական խմբակցության անդամ **Արմեն Ասոյանը**: Նա բանավիճելու էր եկել «Հանձնաժողովական» շարժման անդամ **Կարապետ Ռուբինյանի** հետ «Փոփոխություններ ներքևից» թեմայով ֆինանսկանը, որին մասնակցում էին նաեւ Գեղարքունիքի խորհրդի նախկին պատգամավորներ **Հրանտ Խաչատրյանը** եւ **Արամ Մայիլյանը**, ԵՊՀ դասախոս **Գարիկ Քեռյանը** եւ այլ հյուրեր:

Հանդիպման երկու հիմնական զեկուցողների՝ Կարապետ Ռուբինյանի եւ Արմեն Ասոյանի զեկուցումներն ու մեթոդը տարբերվեց հակադրակն էին, ինչպես ավանդաբար լինում է իշխանական եւ ընդդիմադիր գործիչների հանդիպման ժամանակ: Ասենք ասում են, որ նիշն իրենք են, իրենց առաջարկած ծրագրերն անփոխարինելի են, սակայն որեւէ մեկի կրքոտ ելույթն ու բարձրագույն խոսքերը կամ լուսեն երկրի զարգացածության իրական մակարդակի հետ, բոլորս էլ գիտենք իրականությունն ինչ է:

Աժ նախկին փոխխոսնակ Կարապետ Ռուբինյանը նշեց, թե հանրաքվեն մի նոր փուլ է սկսելու իրենց հանձնաժողովական պայքարի համար: Նրա խոսքով, ամենալավ տարբերակն այն կլինի, որ իշխանությունները նախաձեռնությունը վերցնեն իրենց ձեռքը եւ կատարեն առաջանցիկ քայլեր բարեփոխումներ կատարելու ուղղությամբ: Ինչ վերաբերում է ներքաղաքական իրավիճակի լարվածությանը, Ռուբինյանի համոզմամբ, նոր ընտրությունները միակ ելքը. «Լավ կլինի՝ իշխանությունները ընդունեն, որ ընտրությունները կեղծվել են, համերաշխության մթնոլորտում երկխոսության ճանապարհով ֆինանսկեն ընտրությունների գնալու ելքը, եւ դա միանգամից կթուլացնի իրավիճակի լարվածությունը»:

Կարապետ Ռուբինյանն ընդգծեց, թե ինքն ուրախ կլինի, եթե իշխանությունները կարողանան ժողովրդին զարմացնել իրենց ժողովրդավարությամբ, իսկ եթե նման քայլի նրանք չկարողանան գնալ, ապա ժողովրդին մնում է ներքևից պայքարով սեղմել, որ փոփոխություններ լինեն: «Հանձնաժողովական» շարժման ներկայացուցիչը նշեց, որ իրենց պայքարն արդեն իսկ տվել է պտուղներ՝ իշխանությունները վարչապետ նշանակեցին Տիգրան Սարգսյանին եւ ոչ թե քրեական մի տարրի, սեղմված, թե սեփական ցանկությամբ, բայց կատարում են ժողովրդահաճո քայլեր:

Հանձնաժողովական շարժման հեղափոխությունը երբեմ չիրականացող որակեց ՀՀԿ-ական պատգամավոր Արմեն Ասոյանն ու հավելեց, որ շարժման պայքարը երկրին ոչ մի լավ բան չի տվել՝ հեռանքից բացի. «Փոփոխության իմաստն առաջընթացն է, իսկ ընդդիմության առաջարկը Հայաստանին չի նշանակում առաջընթաց, այլ հետընթաց: Կիսաս, չիրականացած եւ երբեւէ չիրականացող հեղափոխությունն արդեն իսկ Հայաստանին բերեց վնասներ երկրի տարբեր բնագավառներում»:

Ասոյանը համոզված է, որ մարտի 1-ի դեպքերի հիմքը դրվել է նախորդ տարվա սեպտեմբերի 21-ին՝ «Արմենիա-Մարիոթ» հյուրանոցից, եւ մարտյան դեպքերը այդ օրվա տրամաբանական շարունակությունն էին (հիշեցնենք, որ 10 տարվա լռությունից հետո Լեւոն Տեր-Պետրոսյանն այդ օրն առաջին անգամ հայտնվեց հասարակության առջեւ):

ՀՀԿ խորհրդարանական խմբակցության ներկայացուցիչը նշեց, որ ֆանդում, կազմաձևդում առաջարկող հեղափոխությունը չի կարող զարգացում առաջարկել, մինչդեռ հեղափոխությունների շնորհիվ պետությունները թռիչքաձեւ անցում են կատարում դեպի լավ կազմակերպված հասարակություն: Իշխանության ներկայացուցիչը ավելացրեց, որ Հայաստանի նորագույն պատմության մեջ հեղափոխություն եղել է Արցախի հարցում, սակայն դրանից հետո զարգացում չի եղել, որովհետեւ «հեղափոխությունը խժռեց իր հերոսներին», իսկ 98-ից հետո երկիրը սկսել է զարգանալ:

Պատասխանվարման 100 օրը դեռ չբոլորած նախագահից, Ասոյանի կարծիքով, անհնար է մեծ հաջողություններ պահանջել, սակայն միտումներ կարելի է արձանագրել, որոնք դրական են:

ԳՈՏԻՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՈՒՇԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱՎՈՒՄ

Հուլիսի 1-ից կբարձրանան փրկարարների կենսաթոշակները

Հայաստանի փրկարար ծառայության ծառայողների եւ նրանց ընտանիքների անդամների կենսաթոշակները միջին ամսական շուրջ 60 տոկոսով բարձրացնելու որոշում երեկ ընդունեց Հայաստանի կառավարությունը: Անդրադառնալով այս հարցին, վարչապետ **Տիգրան Սարգսյանը** նշեց, որ ժամանակին այն բարձրացվել էր նաեւ ոլորտի աշխատակիցների հետ վարչապետ Սերժ Սարգսյանի հանդիպման ընթացքում, եւ ընդգծեց, որ ներկայացված նախագիծը, ըստ էության, այդ հարցի լուծումն է: Այս որոշման ընդունումը պայմանավորված էր նրանով, որ հունվարին կենսաթոշակների ընդհանուր բարձրացումից փրկարարները դուրս էին մնացել: Որոշմամբ կենսաթոշակառուներին 2008-ի հուլիսին կենսաթոշակների վճարման հետ կտրվի նաեւ միանվագ վճար՝ մինչեւ 2008-ի մարտի 1-ը կենսաթոշակի անցած կենսաթոշակառուներին որոշմամբ վերահաստատված ամսական կենսաթոշակի տարբերության հառաջադիմի չափով, 2008-ի մարտի 1-ից 2008-ի հունիսի 30-ը ներառյալ կենսաթոշակի անցած կենսաթոշակառուներին՝ իրենց կենսաթոշակի անցած ամիսների թվից ելնելով, յուրաքանչյուր ամսվա վերահաստատված ամսական կենսաթոշակի տարբերության չափով:

Կառավարությունը 2008-ի պահուստային ֆոնդից 137 մլն 70 հազար դրամ հատկացրեց աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայությանը՝ որոշմամբ վերահաստատված կենսաթոշակների եւ նախատեսված միանվագ վճարի վճարումներն ապահովելու նպատակով: Այս որոշումն ուժի մեջ կմտնի 2008-ի հուլիսի 1-ից:

Հուլիսի 1-ից կբարձրանան նաեւ մշակույթի ոլորտի աշխատողների աշխատավարձերը՝ 20 տոկոսով:

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

4 մլն դրամ երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարյանի գրասենյակին

Հայաստանի կառավարությունը երեկ մոտ 4 մլն դրամ է հատկացրել Հայաստանի երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարյանի գրասենյակի պահպանման ծախսերը առաջիկա 7 ամիսներին հոգալու համար: Համաձայն օրենքի, նախկին նախագահի գրասենյակի պահպանման ծախսերի գումարը պետք է հատկացվի պետական բյուջեի միջոցներից: Որոշման նախագիծը ներկայացնելիս ֆինանսների նախարար **Տիգրան Դավթյանը** նշեց, որ այդ գումարի հիմնական մասը կուղղվի գրասենյակի 3 աշխատակիցների աշխատավարձերի վճարմանը:

Առողջության առաջնային պահպանման ծախսերը կավելացվեն

Առողջապահության նախարար **Հարություն Քուրկյանը** երեկ լրագրողներին ներկայացրեց կառավարության ընդունած «ՀՀ բնակչության առողջության առաջնային պահպանման 2008-2013 թվականների ռազմավարությունը»: Նա մասնավորապես նշեց, որ 2008-ին ամբուլատոր-պոլիկլինիկական ծառայության տրամադրվող միջոցները 2008-ի 19 մլրդ դրամի դիմաց 2013-ին կկազմեն 47 մլրդ դրամ: Ըստ նախարարի, նախատեսվում է նորոգել բուժհաստատությունները, ավելացնել եւ նորացնել բուժսարքավորումները, բարձրացնել բուժանձնակազմի որակը:

Ա. Ա.

ՀՀ պաշտպանության նախարարության նորակառույց շենքը կշահագործվի սեպտեմբերի 21-ից

1-ին էջից

Սեյրան Օհանյանը երկրի ղեկավարին է ներկայացրել 2008-ի ՀՀ զինուժի առջեւ ծառացած խնդիրները, կատարման ընթացքը եւ մասնավորապես առկա ժամանակահատվածում իրականացվող խնդիրները: Հանրաքվեության նախագիծը ցուցումներ է տվել զինուժի ներկայացուցիչներին: Մասնավորապես ուշադրություն պետք է դարձվի մարտական հերթապահությանը, սահմանների պաշտպանությանը, պաշտպանական բարեփոխումներին:

Լրագրողների հետ հանդիպման ժամանակ Սեյրան Օհանյանը նշեց, որ բոլոր միջոցառումներն անցկացվում են զինված ուժերի պատրաստությունը նոր պաշտպանական բարեփոխումների հասցնելու ուղղությամբ:

Խորհրդակցության ընթացքում Սերժ Սարգսյանը նաեւ պատասխանել է տպանների հարցերին:

Անդրադառնալով նախօրեին Տավուշի մարզի Ծիծառի գյուղի բնակիչ, 21-ամյա Լեւոն Պետրոսյանի զոհվելուն, նախարարը նշեց, որ տղի դիրքերի իրադրության պայմանները այնքիսին են, որ բնակավայրը միշտ ենթակա է գնդակոծության: Հանրաքվեության նախագահը խնդիր է դրել, որ այդպիսի դեպքերում միջոցառումներ իրականացվեն: «Հրամանատարներին ցուցում է տրվել, որ նման դեպքերում համապատասխան պատժամիջոցներ կիրառեն: Այն կրակակետերը, որտեղից կրակ է բացվում, մեր կողմից պետք է համապատասխան ճնշման ենթարկվեն»:

Ինչ վերաբերում է Նախիջեւանի սահմանն անցած 4 հաղթաթղթերի ճակատագրին, նախարարն ասաց, որ նոր տեղեկություններ չկան եւ համապատասխան միջազգային կառույցների հետ աշխատանքները շարունակվում են. «Չեմ կարող ասել՝ երբ հետ կվերադարձվեն, բայց կարում եմ՝ հետ կվերադարձվեն: Մենք որոշակի տեղեկություններ ունենք՝ նորմալ վիճակում են»:

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակության մասին
Խմբագիր եւ հրատարակիչ
«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ
Երեւան 375010 Հանրապետության 47
Հեռ. 374 10 562663
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
www.azg.am
Գլխավոր խմբագիր
ՅԱՎՈՐ ԱՐԵՎԻԿՅԱՆ / հեռ. 521635
Խմբագիր
ՊԱՐԳԵՎ ՅԱՎՈՐՅԱՆ / հեռ. 529221
Հավաստագրումներ (գովազդ) / հեռ. 582960
Լրագրողների սենյակ / հեռ. 581841
Հաճախորդ. ծառայություն / հեռ. 582483
Տարբերակ յուրաքանչյուր ծառայության / հեռ. 529353
Հանձնարարագրային տարածքը «Ազգ» թերթի
Թերթի նիշերի ամբողջական թե մասնակի արտատպումները տրագիր մամուլի միջոցով կամ տպագիր հանրության համաձայնության խնդիր առաջացնում են համաձայն ՀՀ հեղինակային իրավունքի մասին օրենքի
Նիշերը չեն գրախօսում ու չեն վերադարձնում
Գ տարով յուրաքանչյուր գովազդային են, որոնց բովանդակության համար խմբագրությունը պատասխանատուություն չի կրում:
"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

ԱԺ ժամանակավոր հանձնաժողովը քննադատվելու է երկու կողմից էլ

Երեկ մարտի 1-2-ին Երեւանում տեղի ունեցած իրադարձությունները եւ դրանց պատճառներն ուսումնասիրող ԱԺ ժամանակավոր հանձնաժողովն իր նիստում վերջնականապես հաստատեցրեց աշխատելու իր սկզբունքները: Ըստ հանձնաժողովի նախագահ **Սամվել Նիկոյանի՝** արտախորհրդարանական ուժերից խորհրդակցական ձայնի իրավունքով որոշվել է հրավիրել 2007 թվականի խորհրդարանական ընտրությունների ժամանակ 3 տոկոսը հաղթահարած քաղաքական ուժերի մեկական ներկայացուցչի: Երեք տոկոսից ավելի հվե հավաք, բայց խորհրդարան մտնելու 5 տոկոս արգելանքը չհաղթահարած կուսակցություններն են «Ազգային միաբանությունը», ՄԱԿ-ը, «Նոր ժամանակները», նրանց առեղծ նամակ-հրավերներ ուղարկված են: Ինչո՞ւ է 3 տոկոսից ավելին հիմք ընդունվել, որովհետեւ, ըստ Նիկոյանի, մնացած բոլոր տոկոսների վրա հիմնվելը կամայական որոշում կլիներ՝ սա այն տոկոսն է, որով կուսակցությունների մասին օրենքով պետությունը ֆինանսապես օժանդակում է այդ ուժերին, այդպիսով գտնելով, որ հասարակության մեջ դրանք որոշակի ազդեցություն ունեն: Հրավիրվելու են նաեւ փետրվարի 19-ին նախագահական ընտրություններին մասնակցած այն թեկնածուները, ովքեր ներկայացնում են քաղաքական ուժ եւ ԱԺ որոշմամբ հանձնաժողովի կազմում ընդգրկված չեն: Առժամ նամակներ են ուղարկվել Տիգրան Կարապետյանին, Վազգեն Մանուկյանին, Արամ Հարությունյանին: Մնացած թեկնածուները ներկայացված են խորհրդարանում ընդգրկված խմբակցությունների միջոցով: Լ. Տեր-Պետրոսյանն ընդգրկվել էր առեղծ ԱԺ որոշմամբ:

Հանձնաժողովը դիմելու է նախագահին կից Հանրային խորհրդին, որ վերջինս իր կողմից մեկ թեկնածու գործուղի հանձնաժողովի նիստերին մասնակցելու, սա փորձ է քաղաքացիական հասարակության մասնակցության խնդիրը լուծելու, թեեւ նա հրավիրյալի կարգավիճակով է մասնակցելու, այսինքն՝ քվեարկելու իրավունք չի ունենալու, մինչդեռ մյուս հրավիրյալները խորհրդակցական ձայնի իրավունք ունեն: Միջազգային փորձագետներին հանձնաժողովն անհասկանալի հրավերներ է հղելու Եվրախորհրդի Վենետիկի հանձնաժողովի քարտուղար Ջովաննի Բուտիֆոյին եւ Հայաստանում Եվրոպայի միության պատվիրակության ղեկավար Ռաուլ Լուցենբերգերին: Նախորդ օրն արդեն ԱԺ նախագահը դիմել էր Եվրախորհրդին եւ ԵԱՀԿ-ին: Եթե հարկ լինի, ավելի ուշ հանձնաժողովը կկնարկի նաեւ ուրիշ միջազգային փորձագետների հրավիրելու խնդիրը:

Արդյոք հանձնաժողովը սահմանված ժամկետում կհասցնի՞ ավարտել իր գործը: Ս. Նիկոյանը հուսով է, թե հասնելու են, դա կախված է, թե որքանով արտախորհրդարանական քաղաքական ուժերն արագ կարձագանքեն նամակներին եւ ատրամադրել փաստաթղթերը, ինչպես որ ԱԺ հանձնաժողովի պահանջով անելու են: Կամ ԱԺ հանձնաժողովը կարող է բոլոր պատասխանողներին հրավիրել՝ պատասխանելու ծագող հարցերին, ինչի լիազորությունն այլ հանձնաժողով ունենալ չի կարող: Ըստ Ս. Նիկոյանի՝ որքան արտախորհրդարանական ուժերն ակտիվ մասնակցեն հանձնաժողովի աշխատանքին, այնքան հանձնաժողովն ավելի ծավալուն կարող է աշխատել. «Դրա համար անկեղծ դիմում եմ նրանց՝ ակտիվորեն աշխատել: Կա երկու մոտեցում՝ գործ չանել եւ խոսել: Մենք ուզում ենք գործ անել, որովհետեւ շատ հստակ է, որ եթե այս հանձնաժողովի որոշումը հասարակության մեծամասնության դրական գնահատականը չստանա, կարծում եմ, դա լավ չի լինի: Ես ցավում եմ, որ հանձնաժողովը դեռ չստեղծված՝ նրա նկատմամբ անվստահության հարց է իրականացվում: Հանձնաժողովի աշխատանքի ընթացքում դրան կգումարվեն ինքնադատությունը, վարկաբեկումները»: Ս. Նիկոյանը հանձնաժողովի ստեղծման իսկ պահից մտածել է, որ այդպիսի հանձնաժողովը, որքան էլ օբյեկտիվ լինի, էլի վատ բան ասողներ կգտնվեն երկու կողմից էլ:

Մեր կողմից ավելացնենք, որ հիմա, երբ հանձնաժողովն արդեն ստեղծված է, եւ արտախորհրդարանական մի շարք ուժեր էլ մարտի 1-ի իրադարձությունները ինքնուրույն հասարակության մեջ ավելի շատ հավանականություն կա, որ երկու հանձնաժողովներն էլ առավել քաղաքական խնդիրներ են լուծելու. երկուսն էլ քաղաքական ուժեր են ներկայացնում, իսկ ինքնուրույն հանձնաժողովը Հայաստանում ընդունված է օգտագործել ըստ քաղաքական նպատակահարմարության՝ այն որոշ մասով մեր երկրի քաղաքական ուժերը ճոճում են միմյանց վրա: Այնպես որ, անկախ այդ հանձնաժողովներում ընդգրկված առանձին անձանց որակներից, հազիվ թե այս կարգի հանձնաժողովները ճառայեն ճշմարտության բացահայտմանը, ինչը որեւէ երկրում առանց կասկածների տեղիք տալու ի պատճառ անում են դատական մարմիններն ու դատախազությունը: Ինչ-որ հանձնաժողովներ չեն կարող իրավական այլանների լիազորություններով օժտվել:

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Ուստվ տեսահեռախոսազանգ կատարելու հնարավորություն կունենանք

«Բիլայնը» ներդնում է 3G համակարգ

Հուլիսի սկզբից Հայաստանում «Բիլայնի» բաժանորդները հնարավորություն կունենան օգտվելու երրորդ սերնդի ցանցից՝ 3G համակարգից, որի փորձնական գործարկման մասին երեկ «Արմենիա-Մարիոթ» հյուրանոցում տեղի ունեցած ասուլիսի ընթացքում տեղեկացրեց «Արմենտել» ընկերության գլխավոր տնօրեն Նեյդ Վելիչկովը:

Վերջինիս, ինչպես նաեւ ընկերության շարժական կապի զարգացման բիզնեսի գծով տնօրեն Գենադի Կալգաբինի ու գործառնությունների տնօրեն Ալեքսանդր Բիրմանի խոսքերով, 3G համակարգը երրորդ սերնդի շարժական տեխնոլոգիաներն են, որոնք թույլ են տալիս սանալ «մոպիմեդիա» բջջային ծառայություններ եւ ինտերնետին միանալու բարձր արագություն: 3G համակարգի միջոցով մատուցվող ծառայությունների ցանկում ներառվում են նաեւ տեսահեռախոսակապը տեսազանգը եւ շարժական հեռախոսաստեղծությունը:

Երրորդ սերնդի տեխնոլոգիաների ներդրմամբ բջջային կապի բաժանորդները կստանան ծառայությունների ավելի լայն տեսակներ, տեղեկատվության հսկայածավալ հոսքեր, ընդ որում, դրա համար կարիք չի լինի տարբեր գործառնություններ իրականացնելու կամ տարբեր ծառայությունների համար մի քանի ուղղությամբ աշխատելու: Այդ ամենը ամբողջական կարող է տրամադրել մեկ ընկերություն:

Ինչն ավելի հետաքրքրական է ու բաժանորդների շահերից բխող, ինչպես տեղեկացրին ընկերության ներկայացուցիչները, ի մասնավորի տեսահեռախոսազանգը ավելի թանկ չի լինի, քան սովորական հեռախոսազանգը, իսկ 3G համակարգի ընձեռած հնարավորությունները կներառեն անգամ տեսաասուլիսներ անցկացնելու ու դրանց մասնակցելու ծառայությունները:

Հարցին, թե ինչ է անելու ընկերությունը Հայաստան երրորդ բջջային օպերատորի մուտի դեպքում, «Արմենտել» ընկերության գլխավոր տնօրեն Նեյդ Վելիչկովն ընդգծեց, որ ընկերությունը կաշխատի ավելի շատ ու բարձրորակ ծառայություններ մատուցել եւ ոչ թե միայն հենվել գնային հաղթահարության վրա:

Արդեն օրվա թեմայից դուրս ընկերության ներկայացուցիչները տեղեկացրին, որ մինչեւ տարեվերջ ծրագրված է, որ ֆիքսված կապի առնչությամբ գոնե Երեւանում ոչ թվային կմնա միայն երեք կայան, իսկ մարզերում աշխատանքները դեռ կշարունակվեն: Ամեն դեպքում, «Արմենտելը» հիմա աշխատում է հնարավորինս լրացնել ֆիքսված հեռախոսակապի համար հերթագրված բաժանորդների պահանջարկը:

Ա. ՏԵՐՈՒՇԱՆՅԱՆ

ԱՍՈՒԼԻՍ

Դժգոհ են միջազգային կառույցներից

Չնայած ընդդիմությունն կոչվածը քաղաքական շահարկումներից անմասն չէ, որից հեռու չէ նաեւ իշխանությունը (նույնիսկ կարծիք կա, որ իշխանության համար բավականին աշխատանքներ է խաղում), այնուամենայնիվ հակադիր ճամբարների գաղափարական փոխադարձ «կակոցներն» անպակաս են ընտանիքներում, տներում ու փողոցներում, էլ չեմ ասում ժամուղի ակոմբներում ու հանրային այլ վայրերում: Երեկ «Հայաք» ակումբն այս առումով բացառություն չէր, չնայած կակոցները միայն ընդդիմադիր ճամբարից էին: Ակումբի հյուրերն էին Ալեքսանդր Արզումանյանի կինը՝ **Մելիսա Բրաունը**, Գրիգոր Ոսկերչյանի կինը՝ **Մարինե Հարությունյանը** եւ Հուլիկ Հարությունյանի կինը՝ **Անժելա Ալավերդյանը**:

Ալեքսանդր Արզումանյանի կինը՝ Մելիսա Բրաունը չգիտի թե ինչ սպասելիքներ ունենա Հայաստանում քաղաքական զարգացումներից: «Տեսնենք, տեսնենք, սպասողական տոնով նեղեց տիկինը: Կարող է մեր մյուս հանդիպումները Համբուրգի, Բուխարեստի ԱՄՆ կոնգրեսմենների հետ լավ արդյունք բերեն»: Տիկին Բրաունը պատասխանեց, որ գործեր են հարուցում փամփուշտների համար: «Ինչի՞, եթե մարդ օրինական, մարտական զենք կրելու իրավունք ունի, իրավունք չունի՞ մարտական փամփուշտ մեջը դնելու: Չգիտեմ՝ օրենք կա, օրենք չկա», ասաց նա:

Մարինե Հարությունյանը, որ իրենք ամուսինների գործերին, Անժելա Ալավերդյանը ժեստ, թե մի քանի ընտանիքների մարտի 1-ը սկսվել է դեռ հոկտեմբերին: «Ես գիտեմ, որ գնացել եւ վերցրել են մի քանիսի իրենց տված օրինական զենքերը»: Տիկինը պատմեց, որ գործեր են հարուցում փամփուշտների համար: «Ինչի՞, եթե մարդ օրինական, մարտական զենք կրելու իրավունք ունի, իրավունք չունի՞ մարտական փամփուշտ մեջը դնելու: Չգիտեմ՝ օրենք կա, օրենք չկա», ասաց նա:

ՍՈՒՍԱՆՆԱ ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՕՐՎԱԿԱՐԳ

Այսօր

- Ժամը 11.00-ին Քաղաքացիական ազգային նախաձեռնության դահլիճում (Երզնկյան 75) տեղի կունենա «ՀՀ ԱԺ պատգամավորների քաղաքական հեռանկարները եւ կալանավորման իրավական ռեժիմը» խորագրով ասուլիս:
- Ժամը 12.00-ին «Տեսակետ» ակումբի հյուրն է Սուսան Սուրենյանցը:
- Ժամը 12.00-ին Փախստականների օրվա կապակցությամբ «Ուրբաթ» ակումբի հյուրերն են ՀՀ տարածքային կառավարման նախարարության միգրացիոն գործակալության պետ Գագիկ Եգանյանը եւ տարածքային կառավարման նախարարության համակարգային կենտրոն ՊՈԱԿ-ի տնօրեն Հայրեն Մանուկյանը:
- Ժամը 13.00-ին «Տեսակետ» ակումբի հյուրն է Արտակ Մաղոյանը:
- Ժամը 13.00-ին «Հայելի» ակումբի հյուրերն են Հռանուշ Խառատյանը եւ Ալվարդ Պետրոսյանը:
- Ժամը 14.00-ին ԳԱԱ նախագահության նիստերի դահլիճում տեղի կունենա ֆուրդ անվանի գիտնական եւ գրող, ՀՀ գիտության վաստակավոր գործիչ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Հայրիկ Ցոլդի ծննդյան 100-ամյակին նվիրված գիտաժողով:
- Ժամը 15.00-ին մշակույթի նախարարությունում նախարարության եւ Ֆրանսիայի դեսպանության համատեղ ասուլիս՝ նվիրված հունիսի 21-ին անցկացվող «Երաժշտության տոն» համաշեղ նախաձեռնությանը:
- Ժամը 15.00-ին ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության, կառավարության, Հայ օգնության ֆոնդի եւ «Հայշրմուղի» ներկայացուցիչները կնշեն Արտաշատի ջրամատակարարման ծրագրի սկիզբը: Լրագրողների համար առպահովվում է փոխադրամիջոց, որը ժամը 9.45-ին ԱՄՆ դեսպանատան գլխավոր մուտքի մոտից կբարձվի դեպի միջոցառման վայր:
- Ժամը 15.00-ին Հայաստանում եվրոպական հանձնաժողովի պատվիրակությունում (Թրինի 21) տեղի կունենա Ջեռնարկությունների եվրոպական ցանցի պատասխանատու բացման արարողությունը:
- Ժամը 16.00-ին Ուլնեցու 68 հասցեում տեղի կունենա աշխատանքի եւ սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտի տեսքի վերաբացման արարողությունը:
- Ժամը 17.00-ին ՊՆ մայրահաղթային գնդում տեղի կունենա «Պատիվ ունեմ ներկայանալու» շնորհանդեսային միջոցառումը՝ նորակոչիկների, ծնողների, ինչպես նաեւ հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ: Միջոցառմանը ներկա կլինեն վարչապետ Տ. Սարգսյանը, պատասխանատու նախարար Ս. Օհանյանը: Լրագրողների մուտքն ազատ է:

Օրախնամիր

Քաղաքական-մշակութային աղանդավորություն

Հավատը յուրաքանչյուր ժողովրդի գոյության հիմքն է: Բացի իր հիմնական դավանաբանական եւ բարոյական իմաստներից, հավատն ունի շատ կարեւոր հոգեբանական եւ մշակութային շերտեր: Հավատը մեզ ոգեւ է ոչ միայն երկնքի հանդեպ ճշմարիտ կեցվածքի համար, այլեւ երկրավոր՝ մարդկային եւ հասարակական փոխհարաբերությունների համար: Մենք ոգեւ է հավատանք իրար կամ վստահենք, տարական վստահություն ունենանք առագայի նկատմամբ եւն: Ընդհանրապես՝ եթե մեր մարդկային եւ հասարակական փոխհարաբերությունների մեջ գերիշխող է դառնում անվստահությունը, ապա մենք կարող ենք կորցնել միասնական ճանապարհով ընթանալու ունակությունը: Հավատի կորուստը ամենածանր բանն է, որ կարող է պատահել մարդու կամ ժողովրդի հետ:

Գոգեւոր տեսանկյունից ոչինչ դատարկ չի մնում, եւ գոյություն չունեն այսպես կոչված միջին վիճակներ: Հավատի դատարկությունը փոխարինվում է սնահավատությամբ, ինքնաբերժմամբ, մթագնմամբ եւ վերջապես՝ ինքնաոչնչացմամբ: Հասարակական կյանքում է գործի, խնդիրը մղվում է հետին պլան եւ ի վերջո խեղդվում կրավորականության ճահճում: Այս անկախության տարիներին մենք չենք մտածել քաղաքական առաջնորդների սերունդ ձեւավորելու մասին: Սա նշանակում է՝ երկրի ապագան չի մտահոգել երկրի առաջնորդներին, իրենցից դեռ բան չեն տեսել եւ զբաղվել են միայն սեփական իշխանությունն ամեն գնով պահելով: Սառնով բարոյազրկվում եւ փչանում է երիտասարդությունը՝ չտեսնելով իրագործման հնարավորություն եւ սերունդների փոխվստահություն: Իսկ կաբառակերության մեջ խեղդված եւ համաշխարհային զարգացումներից անմասնաբար կերտով հետ մնացած կրթական համակարգը դարձել է ազգային ներուժի ոչնչացման մի ահավոր մեքենա: Այն սերունդը, որը տեսնում է, որ ամեն ինչ չափվում եւ գնահատվում է փողով, ինչպե՞ս է հարգելու սեփական երկիրը:

Եթե մեր ազգային ներուժն արագորեն չհամախմբվի եւ չստեղծվեն համաշխարհային չափանիշներին համապատասխան առաջնորդության եւ կառավարման համակարգեր, ապա ես դժվարանում եմ ասել, թե մենք ինչպես ենք տեղավորվելու համաշխարհային եւ տարածաշրջանային զարգացումների գործընթացներում: Այս ամենն արագորեն պետք է իմաստնությամբ եւ քաղաքական մշակույթի հզորությամբ:

Ոչ վաղ անցյալին են պատկանում ԱՄՆ-ի 2000-ի նախագահական ընտրությունները: Ուշագրավ են Ալ Գորի եզրափակիչ խոսքերը Գերագույն դատարանի կայացրած վճռից հետո. «Միացյալ Նահանգների Գերագույն դատարանն արդեն կայացրել է իր վճիռը: Թեպետ ես բնավ համաձայն չեմ դատարանի վճռին, սակայն ընդունում եմ այն... Եվ այս երեկո, հանուն մեր միաբանության՝ իբրեւ ժողովուրդ եւ ի շահ մեր ժողովրդավարության հզորության, ես հրաժարվում եմ իմ թեկնածությունից»:

Կարծում եմ, որ մեր քաղաքական գործիչները պետք է լուրջ հետեւություններ անեն եւ հասկանան, որ իրենցից վեր շատ ավելի մեծ շահ կա: Դա ազգային ոգու միասնությունն է: Եթե գերհզոր ԱՄՆ-ը չի կարող իրեն այդպիսի ճոխություն թույլ տալ, ապա առավել եւս մենք՝ այնպիսի մի տարածաշրջանում, երբ մորթվելու վտանգը դռան հետեւում է:

«Նույն գետը երկու անգամ չես կարող մտնել» ասացվածքը մեզ զգուշացնում է անցյալի տխուր վերապրումներից եւ հանգեցնում ժամանակի փիլիսոփայության շատ հետաքրքրական խորհրդածության: Ամեն պահ

Որոգայթ փառաց. ո՞րն է ելքը

սա վերածվում է մտածելակերպային, մշակութային, հոգեբանական աղանդավորության, ինչը բնորոշ է այսօրվա մեր քաղաքական, տնտեսական, հասարակական կյանքին: Խորհային վերլուծության անկարողություն, ամբողջական պատկերի կորուստ, լսելու ունակության բացակայություն, անհամբերություն, ակնթարթային լուծումների փնտրում եւն:

Որոմներ

Եթե որակելու լինենք արգախյան գոյամարտին հաջողած արտաքուստ խաղաղ, բայց ներքին պատերազմի տարիները, ապա միանշանակ կարող ենք ասել, որ մենք շարժվում ենք ծանրագույն կորուստների ճանապարհով: Եվ այսօր հնձում ենք այն, ինչ սերմանել ենք: Իսկ ինչ ենք սերմանել՝ ցինիզմ կամ արհամարհանք մարդու նկատմամբ, օրինազանցություն, դրամատրոնություն, անբարոյականություն, ցածրակարգ մշակույթ եւն: Ունենք բարոյական կաթվածահար իշխանական եւ քաղաքական համակարգ: Այս ամենի մեջ մեր նախորդ առաջին դեմքերը մեծ ավանդ ունեն՝ իշխանական ուղղահայացով իջնող սեփական ոգեւորիչային ազդեցությամբ: Թեպետ նրանք մեծ ներդրում են ունեցել մեր պետության կայացման գործում, եւ որոշ պահերի նրանց դերակատարությունը առանցքային է եղել, սակայն աններելի բացթողումներ են ունեցել ազգային կամ հոգեւոր խնդիրներում: Խանդավառությունների եւ ոգեւորությունների ալիքներից հետո սկսում են ափսաել ավելի նուրբ հոգեկան շերտեր, եւ որոշակի զգացողություններ բյուրեղանում են մարդկային գիտակցության մեջ: Բացասական երեւոյթների խթացումը հանգեցրել է նրան, որ այդ առաջնորդները դարձել են չափված, եւ ազգը նրանց հրաժեշտ է տվել այլեւս նրանց չհանդիմանելու ակնկալիքով: Այս փրել-չփրելը այդքան էլ անեկան խնդիր չէ քաղաքականության ոլորտում, որպիսեռ բոլորն էլ իրենց հոգում փայփայում են մարդկանց կողմից սիրված լինելը: Բայց որպես կանոն՝ եթե չես սիրում, չես էլ սիրվում: Եվ ես տեսնում եմ, թե ինչպես են մեր սեփական հայրենիքում ատելու ջերմությունը, ազգային միասնականության գոյությունը եւ հայրենաշինության նախաձեռնությունը սառեցվել իշխանական անտարբերության սառցարանններում, կամ ինչպես է իշխանական կեղծիքով պատմված «հայրենասիրությունը» նսեմացել մարդկային գիտակցության մեջ: Եթե ներկայիս իշխանությունները չեն սարսափում այս ժառանգությունից, ապա իրենք էլ կարող են հայտնվել նույն վիճակում, որպիսեռ իշխանությունը կարող է շատ արագ կատարվել եսամոլության ծուղակներում եւ տառապել կուրությամբ:

Սերնդափոխություն

Քաղաքական սերնդափոխության անհրաժեշտությունը կարծես ոչ ոք չի վիճարկում: Դա կյանքի օրենք է: Բայց երբ բանը հասնում նախաձեռնի պետությունը՝ հաճախ հայության շահի եւ յուրաքանչյուր հայի ճակատագրի նկատմամբ մեծագույն պատասխանատվության զգացումով:

Արժեքներ եւ առաքինություններ

Մենք սիրում ենք խոսել արժեքներից, բայց ոչ՝ առաքինություններից: Որպիսեռ արժեքը ոչ մի բարոյական պարտականություն մեր առջեւ չի դնում: Արժեքները կախում ենք պատից, եւ երբ հարցնում են. «Դու ո՞վ ես», ասում ենք. «Գնա կարդա՛, պատից կախված է»: Ամենամեծ քարոզչությունը իրական գործերն են եւ ոչ՝ գործի պատրանքները: Իսկ քանի որ մեղավոր մարդիկ ենք, ամեն ինչ գալիս է նախ մեղքի ինքնագիտակցումից եւ առանց կեղծիքի «մեղա Աստուծո» ասելուց: Բայց եթե տրան չհետեւեն որոշակի գործեր, ապա ավելի լավ է «մեղան» չասել:

Մենք փոքր ժողովուրդ ենք՝ ենթարկված պատմական ծանրագույն փորձություններին: Սա նշանակում է, որ մեր դիմադրության ասիճանն ունի բնական սահմանափակվածություն, եւ մեր ինքնապաշտպանական կարողությունները բավականին վնասված են: Եթե արատների դեմ տարական պատշաճ վարություն չունենանք, ապա իրավիճակը կարող է հունից դուրս գալ: Այսօր զարմանում ենք, թե ինչպես այս օրն ընկանք եւ ինչու ենք խեղդվում կեղտի մեջ: Մյս հնամենի ածուն, այս մշակույթի տերը: Բայց մեր ներկան ոչ մի կապ չունի հնության կամ մշակույթի հետ: Մենք կարծես գողացված լինենք պատմությունից կամ պատմությունը՝ մեզանից:

Վերջին տարիների ընթացքում հետեւողականորեն արժեզրկվեց խոսքը՝ մարդուն վերափոխելու մեծագույն գործիքը: Մեկը մյուսի հետեւից բազմացան ասելիք չունեցող լրատվական գաղափարներ եւ ջանադրաբար լծվեցին անիմաստ ջուրեեցողին, մարդկային ճղճիմ կրքերի ցուցադրմանը, կեղծ իդեալների քարոզչությանը, հայհոյությանը ելն: Եվ այս ամենի մեջ չգիտես, թե ճշմարիտ խոսքը ուր տեղավորես, որ չսայթաքի եւ չարհամարհի վնասված մարդկային գիտակցության մեջ:

Կանգ առնելու արվեստը

Քաղաքական մշակույթի բացակայության դրսեւորումներից մեկն էլ այն է, որ կանգ առնել բնավ չգիտեմ: Վերջերս ափսաթը հետեւում էր ԱՄՆ-ի Դեմոկրատական կուսակցության նախագահական թեկնածուներ Բարաք Օբամայի եւ Հիլարի Քլինթոնի չափազանց սուր պայքարին: Բայց երբ հասավ կանգնելու պահը, Քլինթոնը հավաքեց իր յուրայիններին եւ ասաց, որ խաղն ավարտված է, եւ այդ պահից սկսած իրենք բոլորը պետք է ամբողջ ուժով սատարեն սենատոր Օբամային: Սա շատ ծանր էր լսել այդտեղ կանգնածներից շատերի համար, որոնք եղել են Քլինթոնի ջերմ եւ նույնիսկ մոլեռանդ պաշտպանները: Բայց այդ պահը հաղթահարվեց՝ քաղաքական գործչի եզակի է, ուստի՝ անկրկնելի: Առավել եւս՝ աստեղային պահերը: Դրանք տրվում են մեկ անգամ, երբ մարդն իր երազներով վերցնում է պահը եւ չի դառնում պահի ու իր ես-ի գերին: Պետք է զգուշանալ իրենց պահը սպացած եւ վաստնած մարդկանցից. նրանք չեն կարող առաջնորդել ժողովրդին:

Իսկ նրանք, ովքեր երազներ ունեն եւ կամենում են իրական առաջնորդներ լինել, միշտ պետք է հիշեն Չարենցի խոսքերը.

- Ես ուզեցի երգել գովքը Աստծու,
Երգել փառքը պայծառ սիրո եւ հացի,
Սիրտս լցվեց... բայց չգիտեմ, թե ինչու,-
Գորշ օրերի տաղտկությունը երգեցի:

Որո՞ն է ելքը

Ես ուրիշ ճանապարհ չգիտեմ, բացի իմ Տիրոջից՝ Հիսուս Քրիստոսից, ով ասում է. «Ես եմ ճանապարհը»: Պետական-քաղաքական ոլորտում այս կատակերգությամբ պահանջվում է լրջություն: Անցյալի տխուր երեւույթները պետք է մի կողմ թողնել, երբ միայն մեծ տոներին էին եկեղեցի մտնում, այն էլ՝ այնպես, կարծես թե Աստուծուն լավություն էին անում: Քրիստոնեությունը քաղաքավարական վերաբերմունք չէ կամ բարի կամքի դրսեւորում դեռի եկեղեցին, այլ իրական ներքին փոփոխություն եւ Աստծո ճշմարտության մեջ քայլելը: Մենք պետք է հասկանանք՝ քրիստոնեությունը հենց այն է, ինչ մեզ պետք է որպես ազգի եւ կարող է հոգեպես ու բարոյապես ամրացնել մեզ ներսից: Որպիսեռ բարոյապես փչացած ազգերը դատապարտված են կործանման: Քրիստոնեությունը հոգեւոր ճանաչողության, կյանքի փիլիսոփայության եւ մարդկային կենցաղավարության մի համապարփակ ուսմունք է, որը պատասխանում է կյանքի բոլոր հարցադրումներին, համահունչ է մարդու ներքին հիմնարար փնտրումներին եւ կատարյալ ազատագրման հնարավորություն է տալիս յուրաքանչյուր մարդու: Լինելով համամարդկային՝ քրիստոնեությունը յուրաքանչյուր ազգի մեջ կայացել է յուրովի: Մեզ համար դարձել է ինքնություն եւ էություն, որից ամուր պետք է կառչենք:

Վերադառնանք մեր ներկա իրավիճակին: Որն է ելքը: Մեր պետության առաջնորդները, նախ անսալով Աստուծուն, պետք է դուրս գան այս քաղաքական ժառանգության Սողոմից: Եվ հետ չնայեն: Պողոս առաքյալ ասում է. «Հետեւում մնացածները մոռացած՝ ընթանում եմ առաջ» (Փիլ. Գ 13): Սա ազատագրված մարդու ճանապարհն է, որ ձերբազատվել է անցյալի կապանքներից եւ ընթանում է առաջ: Մի կողմ թողնել կիսակատար լուծումները եւ մինչեւ վերջ շարժվել հիմնավոր բարեփոխումների երթեմն ցավոտ ճանապարհով: Անկեղծ լինել սեփական ժողովրդի առաջ, ժողովուրդն անպայման դա կգնահատի: Անհույս եւ անելանելի վիճակներ չկան, եթե մենք գիտակցում ենք, որ մեր հույսն Աստված է:

Եվ վերջում, որպեսզի վերամբարձ դասեր տալու մեջ չհանդիմանվեմ, «մեղա Աստուծո»:

ՄԵԼՔՈՆ ՔՐԻՍՏՈՍՅԱՆ

ԵՐԻՏ ԳՐՔԸ

«Քաֆու-90» կամ արյունալի ահաբեկչություն

«Մամուլ» հրատարակչությունը լույս է ընծայել հայտնի գրող Նինա Մախիի «Քաֆու-90 կամ ինչպես կերան ժանգա Բաբայանին» գիրքը: Դա վավերագրական պատում է Խորհրդային Ադրբեջանում տեղի ունեցած արյունալի ահաբեկչությունների, հայ բնակչության եղեռնի մասին: Գիրքը շատ անհրաժեշտ է ոչ միայն Հայաստանին, այլեւ ամբողջ համաշխարհային ընկերակցությանը:

«Ինտերնացիոնալ» քաղաք Քաֆուն իր գոյության ընթացքում երբեք չէր տեսել նման արյունալի, ահազդու օրեր: Սպանում էին միայն հայերին, այն էլ առանձնակի դաժանությամբ: Նման ոճիրների միջազգային անվանումը մեկն է՝ սովորական ֆաշիզմ, հայ ազգի ցեղասպանություն Ադրբեջանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունում:

Այո, հենց հայերի ցեղասպանություն ԽՍՀՄ-ում 20-րդ դարի վերջերին, Սումգայիթում, Բաքվում, Կիրովաբադում եւ այլ քաղաքներում: Ցեղասպանությունն ահաբեկչության ծայրահեղ դրսեւորումն է:

Նինա Մախիին իր գրքում մասնավորապես պատմում էր հայ բնակչության դեմ Ադրբեջանի խորհրդային ղեկավարության ծրագրած եւ իրականացրած արյունալի ահաբեկչության մասին: Բոլոր ահաբեկիչներն ունեին հայերի բնակարանների հասցեները, որոնց իրենք պետք է մորթեին, վառեին, բոնաբարեին, ուտեին ու պատառոտեին անեին, ընդսմին չմոռանալով կողոպտել եւ ջարդուփշուր անել հայերի օջախները, տանել գորգերը, կահույքը, բյուրեղապակեղենը, ոսկեղենը, արծաթեղենը, նկարները, ամեն ինչ:

Այս բոլոր ահաբեկչությունների նպատակն էր կանխել Ղարաբաղի խնդրի հնարավոր լուծումը, հայերին ահաբեկել նոր սադիստական սպանությունների հեռանկարով, որպեսզի հրաժարվեն Արցախի ազգային-ազատագրական շարժումից: Եվ այն էլ ԽՍՀՄ-ում՝ ափսարհի «լավագույն» երկրում:

Նինա Մախին տալիս է գլխավոր հարցը. «Այդ ինչպե՞ս պատահեց, որ Ադրբեջանում ամբողջ երկու տարի առանձնակի դաժանությամբ, անպատիժ սպանում էին հայերին»: Հեղինակը ընդգծում է. «Քաֆվի քաղխորհրդի նախագահ Ռ. Էմինբեյլին լավ գիտեր, որ խաղաղ հայ բնակչության դեմ ուղղված ահաբեկչությունները միաված են նաեւ ԽՍՀՄ պետական կարգի խարխլմանը»:

Ադրբեջանի իշխանությունները չդատապարտեցին հակամարդկային ոճիրները եւ ցավակցություն չհայտնեցին զոհերի հարազատներին: ԽՍՀՄ-ի փլուզումից հետո ոճրագործներից շատերի նկատմամբ հարուցված գործերը կարճեցին, նրանց մեծ մասն ազատ արձակվեց: «Անպատժելիությունը ծնում է էլ ավելի մեծ չարիք», նշում է հեղինակը:

Մարդկության դեմ ուղղված հանցագործությունները պետք է դատապարտվեն: Ադրբեջանական կողմը պարտավոր է փոխհատուցում վճարել հայ փախստականներին եւ պատասխան տալ իր գործած ոճիրների համար: ԽՍՀՄ-ում Սումգայիթի դեպքերից առաջ մարդասպան էր անցկացվել: Հարկավոր է Ադր. ԽՍՀ-ում եղած հայ բնակչության թիվը համեմատել հետագա տվյալների հետ:

Ադր. ԽՍՀ բաներում կային բազմաթիվ անմեղ հայեր, որոնց ես սպանեցին, թաղելով բաների մոտ: Նրանց մասին առհասարակ մոռացել են: Ինչո՞ւ համաշխարհային հանրությունը չի հետաքրքրվում 1988-90 թթ. հայ բանտարկյալներով:

Ադր. ԽՍՀ-ում հայերի դեմ իրականացված ահաբեկչությունը եւ ցեղասպանությունը, հեղինակի խոսքերով, «խայտառակություն են ողջ մարդկության համար»: Այս գիրքը հարկավոր է մեծ տպաքանակներով հրատարակել ափսարհի բազմաթիվ լեզուներով:

«ԱՄՆ նախագահը երբեք չի ժխտել հայերի ցեղասպանությունը»

Կոնգրեսի Ներկայացուցիչների պալատում հայտարարում է պետքարտուղարի օգնական Քրիզը

Մինչ Միացյալ Նահանգների նախագահի դեմոկրատ թեկնածու Բարաք Օբաման Ամերիկայի Հայ դաշի հանձնախմբի ղեկավար Քեն Հայիկյանին հղած նամակով, որը հունիսի 18-ի համարում «հայանպաստ ահավոր ուղերձ» է բնութագրել «Հյուրիթը», վերահաստատում էր Հայոց ցեղասպանությունը ճանաչելու անհրաժեշտության մասին իր դիրքորոշումը, նույն օրն առավոտյան, մասնակցելով «Կովկասի վերջին զարգացումները» թեմայով ԱՄՆ Կոնգրեսի Ներկայացուցիչների պալատի արտաքին հարաբերությունների հանձնաժողովում կազմակերպված լսումներին, ելույթ է ունենում պետքարտուղարի օգնական Դենիել Քրիզը, ապա եւ պատասխանում հարցերին:

Ելույթում Քրիզը Հայաստանի եւ Թուրքիայի հաշտեցումը պայմանավորում է «նուրբ եւ ցավալի» հիմնախնդիրների հաղթահարմամբ եւ ասում. «Հայաստանը պետք է պատրաստ լինի ճանաչել առկա սահմանը եւ կառուցողական արձագանք տալ Թուրքիայի հնարավոր քայլերին: Հայաստանը պետք է հայտարարի, որ ժամանակակից Թուրքիայի նկատմամբ հողային որեւէ պահանջ չունի: Միաժամանակ անհրաժեշտ է Թուրքիայի առերեսումը սեփական պատմության մութ էջերի հետ, որքան էլ դա դժվար լինի»:

Նշելով այդ մասին, «CNN-Turk»-ը կայքէջում գրում է, որ Ներկայացուցիչների պալատի հայամետ անդամներ Ադամ Շիֆն ու Դայան Վաթսոնը հանդուրեն հարցրել են. «Ինչո՞ւ ԱՄՆ-ը որպես ցեղասպանություն չի ճանաչում 1915-ի իրադարձությունները», իսկ Քրիզը պատասխանել է. «ԱՄՆ նախագահն այդ իրողությունը երբեւէ չի ժխտել: Պարզապես «ցեղասպանություն» հասկացությունը մեզի քաղաքական նկատառումներով չենք օգտագործում, որպեսզի դա ոչ կամրջի հայ-թուրքական հարաբերություններին, ոչ էլ պատմության հետ Թուրքիայի առերեսմանը»:

Երեկ ԱՄՆ Սենատի արտաքին գործերի հանձնաժողովում պետք է հարցերին պատասխաներ Հայաստանում ԱՄՆ դեսպանի հավանական թեկնածու Մերի Յովանովիչը: Ըստ ամենայնի սենատորները ճշտելու էին Հայոց ցեղասպանության հարցում նրա դիրքորոշումը: Ի դեպ, լսումների նախօրյակին Ադամ Շիֆը, Ջորջ Ռադանովիչը, Քրենկ Փալոնը եւ Ջոն Քոլեմբերգը Ներկայացուցիչների պալատ էին ներկայացրել «Վերջ Թուրքիայի կողմից Հայաստանի շրջափակմանը» վերնագրով օրինագիծը եւ պետքարտուղարությունից պահանջել, որ վերացման համար ճնշում գործադրի Անկարայի վրա:

Հ. Ղ.

Հիլարի Քլինթոնը մտածում է 20 մլն դոլար պարտքի մասին

Իսկ Բիլը գոլֆ է խաղում

Քլինթոնների ընտանիքը նոր է ավարտել մեկաբաթյա հանգիստը ԱՄՆ-ի արեւմտյան ափին գտնվող Իսթ Հեմփթոն առողջավայրում, որտեղ սովորաբար հանգստանում են նյույորքցի միլիարդատերերը: Իտալական «Ռեպուբլիկա» թերթը գրում է, որ Հիլարի Քլինթոնին տեսողները պատմում են նրա ընկճվածության մասին, նշելով, որ նա մտահոգ է «պարտքերի պատճառով»:

Մինչդեռ Հիլարիի ամուսինը՝ նախկին նախագահ Բիլ Քլինթոնը, ներկայումս միայն գոլֆ է խաղում, ճաշկերույթների մասնակցում եւ խոսում իր արածների ու անելիքների մասին, գրում է «Ռեպուբլիկան»:

Նախագահական ընտրարշավում իր կուսակից Բարաք Օբամայից պարտություն կրելով՝ Հիլարին հունիսի 7-ին հրաժեշտ տվեց իր ընտրական շտաբի անդամներին, ամուսնու եւ դստեր հետ Իսթ Հեմփթոնում մեկ շաբաթով հյուրընկալվելով ֆինանսիստներից մեկի տանը: Այնտեղ մեկնելու նպատակը ընտրական անհաջողությունից հետո Հիլարի Քլինթոնին մնացած 20 մլն դոլարանոց պարտքը մարելու միջոցների որոնումն էր:

Քլինթոնների հյուրընկալած ընտանիքը հունիսի 14-ին ընթրիք կազմակերպեց 12 ֆինանսիստների համար, որոնցից կանխի Ամերիկայի ամենահայտնի զույգի սնանկացումը:

Առաջիկա հինգշաբթի Հիլարին Վաշինգտոնում կազմակերպվելիք հանգանակությանը կմասնակցի Դեմոկրատական կուսակցության ֆինանսական վիճակը բարելավելու նպատակով:

Բուշն առաջարկում է նավթ արդյունահանել Ամերիկայի ծանծաղուտում

Նախագահ Ջորջ Բուշը Կոնգրեսին կոչ է արել չեղյալ հայտարարել 1981-ի դաշնային մորատորիումը, ըստ որի արգելված է նավթի ու գազի արդյունահանումը Ատլանտյան եւ խաղաղ օվկիանոսների ծանծաղուտում եւ Մեխիկական ծոցի մի մասում:

Ֆրանսպրեսը մեջբերում է Բուշի այն խոսքերը, որ մորատորիումը հնացել է եւ արդյունավետ չէ: Ըստ Բուշի, ծանծաղուտում թերեւս կա 18 մլրդ բարել նավթ, որը կարող է մասամբ բավարարել ԱՄՆ-ի նկատմամբ երկրի կախումը արտաքին մատակարարներից:

Նախագահության հանրապետական թեկնածու Ջոն Մակքենը համամիտ է Բուշի հետ: Մինչդեռ դեմոկրատների թեկնածու Բարաք Օբամա հայտարարել է, որ ինքը դեմ է մորատորիումի վերացմանը, քանի որ տարիներ են հարկավոր ծանծաղուտում նավթահանույթն արդյունավետ դարձնելու համար: Բացի դրանից, ծանծաղուտի շահագործման մասին ԱՄՆ-ում սկսել են խոսել նավթի վերջին թանկացումներից հետո: Այսպես, մեկ բարել տեխասյան նավթի գինն արդեն հասել է 139 դոլարի: Արդեն տարեսկզբին մեկ բարել նավթի գինը հասել էր 100 դոլարի սահմանագիծը:

«Իսլամական ջիհադը» միանում է «Համաս»-Իսրայել զինադադարին

Երեկ «Ազգը» գրեց, որ Եգիպտոսի միջնորդությամբ Իսրայելը եւ պղեստինյան «Համաս» առաջական խմբավորումը կնքել են զինադադարի համաձայնագիր, որն ուժի մեջ է մտել հունիսի 19-ից: Տվյալ զինադադարը վերաբերում է միայն Գազայի հատվածին եւ Իսրայելին, բայց տեսական դասընթաց դեռեւս զգալիորեն կնպաստի Մերձավոր Արեւելքում լարվածության թուլացմանը:

Ֆրանսպրեսը հաղորդում է, որ պղեստինյան մեկ ուրիշ առաջական խմբավորում՝ «Իսլամական ջիհադը», արդեն հունիսի 19-ին ցանկություն է հայտնել միանալու զինադադարին, խոստացել է չխախտել այն, չնայած դրա պայմանները «լիովին չեն գոհացնում» խմբավորմանը:

«Չնայած մեր առարկություններին, մենք չենք խոչընդոտի պայմանագրին եւ չենք խախտի այն, քանի որ մեզ համար կարեւոր է Պղեստինի միասնությունը, եւ մենք ուզում ենք հասնել շրջափակման վերացմանը», հայտարարել է «Իսլամական ջիհադի» առաջնորդ Նաֆիզ Ազամը, ավելացնելով, որ ինքը պարտավորագիր չի ստորագրել, բայց բանավոր խոստումներ է տվել «Համասի» ղեկավարներին եւ Եգիպտոսի կառավարությանը:

Ազամի կարծիքով, կնքված համաձայնագրի գլխավոր թերությունն այն է, որ զինադադարը չի տարածվում Այսրհորդանանի վրա:

Հունիսի 17-ին «Իսլամական ջիհադի» գրոհայիններն ուժգին գնդակոծության էին ենթարկել Իսրայելի հարավային շրջանները, առնվազն 20 ռեակտիվ արկ: Բայց զինադադարի օրվանից սկսած խմբավորումը դադարեցրել է բոլոր ռազմական գործողությունները:

ԼՈՒՐԵՐԻ ՀՈՍՔԵՐ

«Առանց դարաբաղյան հիմնահարցի լուծման Թուրքիա-Հայաստան հարաբերությունները չեն կարգավորվի»

Այդ մասին Բաքվում, ինչպես հունիսի 18-ին նշել է թուրքական մամուլը, հայտարարել է Թուրքիայի ազգային մեծ ժողովի նախագահ Քյոքսալ Թոփքանը: Նա լրագրողների հետ հանդիպմանն ասել է, որ Լեռնային Դարաբաղի նկատմամբ Թուրքիայի որդեգրած դիրքորոշումը հստակ է, ապա եւ շարունակել. «Մենք այդ հարցում վճռական ենք: Հուսով եմ եւ ցանկանում եմ, որ լուրահանյուրը նույնս կբերի հիմնահարցի լուծմանը՝ ձիրք գնահատելով իրադրությունը: Իսկ դրանում Հայաստանը թող չկասկածի, առավելագույնս օգտվելու է ինքը: Թուրքիան այլ բան չի պահանջում, քան Ադրբեջանին պատկանող հողերի վերադարձն ու խաղաղության հաստատումը»:

Միլլի մեջլիսի նախագահ Օքթայ Սասդովը Թոփքանի հետ հանդիպմանը գոհունակությամբ է արձագանքել դարաբաղյան հիմնահարցում Թուրքիայի աջակցությանը, միաժամանակ ընդգծել է, որ «1915-ի իրադարձությունների հարցում էլ Թուրքիային առավելապես աջակցում է Ադրբեջանը»:

Հ. Ղ.

Բացվեց Եվրոմիության գագաթաժողովը

Բյուսելում երեկ բացված եմ գագաթաժողովի օրակարգում են Աֆղանստանի, Իրանի եւ Կոսովոյի հարցերը, ինչպես նաեւ միջազգային անվտանգության խնդիրները: Բայց եմ 27 երկրների պետությունների ու կառավարությունների ղեկավարների ուշադրության կենտրոնում են եվրոմիության կառուցվածքային բարեփոխումների, մասնավորապես Լիսաբոնի պայմանագրի ընդունման հետ կապված դժվարությունները: ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ը հաղորդում է, որ օրակարգում են նաեւ եվրոմիայի տնտեսության խնդիրները: Աշխարհում վառելիքի թանկացումը դժգոհության ելույթներ է առաջացրել մի շարք երկրներում, այդ թվում՝ եվրոմիության անդամ պետություններում:

Մեծ Բրիտանիան վավերացրեց Լիսաբոնի պայմանագիրը

Երկարատեւ բանավեճից հետո բրիտանական խորհրդարանի Լորդերի պալատը վավերացրել է եվրոահմանդության կրճատ տարբերակը՝ Լիսաբոնի պայմանագիրը: Ֆրանսպրեսը հաղորդում է, որ երեկ առավոտյան փաստաթղթին պատասխանելիս հավանություն է տվել էլիզաբեթ Բ թագուհին: Դրանից հետո փաստաթուղթն անմիջապես ուժի մեջ է մտել:

Ավելի վաղ Գորդոն Բրաունի կառավարությունը հրաժարվել էր Լիսաբոնի պայմանագիրը դնել հանրաքվեի:

Հունիսի 12-ին Հոլանդիայում անցկացված հանրաքվեի ժամանակ բնակչության 53,4 տոկոսը դեմ էր քվեարկել պայմանագրին: Առայժմ Իռլանդիան եմ միակ երկիրն է, որը մերժել է Լիսաբոնի պայմանագիրը: Փաստաթուղթը 2009-ի հունվարից ուժի մեջ կմտնի լոկ այն դեպքում, եթե մինչեւ տարեվերջ վավերացնեն եվրոմիության անդամ բոլոր 27 պետությունները:

ՀԱՀ-ում չինացիները համարվում են սեւամորքներ

Հարավաֆրիկյան Հանրապետության գերագույն դատարանը որոշել էր, որ երկրում ապրող չինացիները սեւամորքներ են: Դատավճիռը կայացվել է այն նույնակով, որ չինացիներին հնարավորություն տվի օգտվելու սեւամորք հարավաֆրիկացիների կենսամակարդակի բարձրացմանն ուղղված արտոնություններից:

Դարձը դատարան էր մտել ՀԱՀ Չինական ընկերակցության հայցի կապակցությամբ, որը կառավարությանը մեղադրել էր տասնյակ հազարավոր չինացիների հանդեպ խտրականության մեջ: BBC-ն մեջբերում է ընկերակցության այն մտքերը, թե ՀԱՀ-ում չինացիները հաշվվել են սպիտակամորքներ, այդ պատճառով չեն կարողացել շահավետ գործարքներ կնքել եւ աշխատանքում առաջադիմել:

Ի դեպ, ապարտեիդի վարչակարգի տարիներին եւս ՀԱՀ-ում չինացիները խտրականության են ենթարկվել, քանի որ համարվում էին «գունամորքներ»:

Դատավճռի շնորհիվ այստեղ չինացիները ՀԱՀ-ում կօգտվեն սեւամորքների համար կառավարության նախատեսած ծրագրերից եւ արտոնություններից:

Չնայած այս ամենին, ՀԱՀ-ում ապարտեիդի վերացումից 14 տարի անց սեւամորքների եւ սպիտակամորքների սոցիալական անհավասարությունը պահպանվում է: BBC-ի տվյալներով, ներկայումս սպիտակամորք հարավաֆրիկացին իր սեւամորք հայրենակցից 450 տոկոսով ավելի շատ է վաստակում:

Բանգլադեշում կորցրել են Անկախության հռչակագիրը

Բանգլադեշի իշխանությունները հայտարարել են, որ անհայտ հանգամանքներում անհետացել է երկրի Անկախության հռչակագրի բնօրինակը: Այդ փաստաթուղթը կազմվել էր 1971-ին Պակիստանի դեմ մղված պատերազմի ժամանակ: BBC-ն հիշեցնում է, որ փաստաթուղթը կազմվել էր Բանգլադեշի անկախության շարժման բանտարկված առաջնորդ Շեյխ Մուջիբուր Ռահմանի հանձնարարությամբ:

Պատմական մի շարք փաստաթղթերի կորուստը հայտնի է դարձել 2008-ի ապրիլին, երբ իշխանությունները որոշել են դրանք հանձնել պետական արխիվին: Բնօրինակների կորստի կապակցությամբ արխիվին հանձնվել են փաստաթղթերի պատճենները:

Արդի Բանգլադեշի տարածքը մինչեւ 1947 թվականը մտնում էր Հնդկաստանի կազմի մեջ, որն այն ժամանակ բրիտանական գաղութ էր: Անկախացումից հետո Հնդկաստանի հյուսիս-արեւմուտքում ստեղծվեց Պակիստանի պետություն, Բանգլադեշը մտավ դրա կազմի մեջ: 1971-ին մի քանի ամիս տեւած ապստամբությունից հետո Բանգլադեշն անկախացավ Պակիստանից:

ՀՀ կենտրոնական բանկը տեղեկացնում է, որ արժութային շուկայում ձեւավորվել են հետեւյալ արտարժույթների միջին փոխարժեքները. 19.06.2008 թ.

ISO-ի կոդը	Միավոր	Արտարժույթ	Միջին փոխարժեք
USD	1	ԱՄՆ դոլար	304.69
EUR	1	Եվրո	472.24
RUR	1	Ռուս. ռուբլի	12.87
GEL	1	Վրաց. լարի	214.42

Փարավոն Միրզոյանի անհատական ցուցահանդեսը Գյումրիում

Հայ արդի կերպարվեստում վաղուց ճանաչված, իր տեղը գտած, ոճն ու ձեռագիրը մշակած նկարիչ Փարավոն Միրզոյանն իր անհատական ցուցահանդեսը մեկ ամիս շարունակ ներկայացրեց արվեստների քաղաք Գյումրիում: Ասլամազյան հյուրերի դահլիճը բազմամարդ էր՝ նկարչի ստեղծագործությունները հետաքրքրել էին ոչ միայն գործընկերներին, այլեւ մասնագետներին, պատահական այցելուներին: Փ. Միրզոյանի ստեղծագործական ուղին սկիզբ է առել 1975-ին, Լենինգրադի գեղարվեստի ակադեմիայում: Ուսման ընթացքում մասնագիտական հիմնարար կրթություն ստանալուց հետո վերադառնում է Հայաստան, պահպանելով աչխարհից, առօրյա կյանքից քաղած տպավորությունների անձնական ընկալումների բարությունը:

Պատկերասրահի երեք սրահներում ներկայացված չորս տասնյակ նկարները գեղանկարչի վերջին 10 տարիների աշխատանքներն են, որոնք բաժանված են երեք ուղղությունների՝ բնապատկեր, նատյուրմորտ ու դիմանկար: Իսկ կնոջ կերպարը կենտրոնական արքայտ է նկարչի համար, ու նա կարողացել է որսալ գեղեցիկ պահերը, նեբնչանքի ու հիացմունքի վայրկյաններն ու դարձել դարձել ավեստի գործ: Հայկական բնաշխարհը պատկերող կտավներում վառ գունային գամմաներով է վրձնած ամեն մի թուփ, ամեն մի սար ու ծառ, ստեղծելով լույս ու սվերի նրբերանգ մի խաղ, որոնցից պայծառություն է ճառագում: Իսկ մութ ու սեւ ֆոնի վրա նկարված նատյուրմորտներում ամեն մի ծաղիկ, մրգի կեսը կամ մեկ մարմնի մի մաս ու կարծես ի չիր է դառնում մութը, սեւը եւ առաջին պլան է գալիս գեղեցիկը, պլաստիկան եւ որսած անկրկնելի պահը... Փարավոն Միրզոյանի ստեղծագործությունների խորությունն ու գաղտնիքն է «Իմ այգին», «Խոհեր», «Կինն ինքնությունում», «Հաստնություն», «Հաղ», «Դիմանկար», «Գգվանք» եւ այլ կտավներում: Նկարչի անհատականությունը, նրա բնավորության դինամիզմը եւ խառնվածքն առկա են յուրաքանչյուր գործում՝ լինի դիմանկար, բնապատկեր, թե նատյուրմորտ:

«Ազգը» ցուցահանդեսի բացումից հետո զրուցեց գեղանկարիչ Փարավոն Միրզոյանի հետ, որը բազմաթիվ պարգեւներից հետո արժանացել է նաեւ պետական մրցանակի ու որոշել է իր ցուցահանդեսները բացել ոչ թե արտերկրում, այլ հանրապետության մարզերում՝ ներկայացնելով հայկական բնաշխարհը, իր երազների ու մոսաների այցագրությունը կտավներում:

«Հրատարակեմ, որ մշակույթների կենտրոն Գյումրիում տեղի ունեցավ իմ անհատական ցուցահանդեսը: Ամեն մի նկարչի համար մեծ պատիվ է իր աշխատանքները ներկայացնել խստապահանջ գյումրեցիներին ու արժանանալ նրանց գովեստի խոսքերին: Վանաձորից հետո, որը անցած ամիս էր, մեկ ամիս էլ Գյումրիում իմ ստեղծագործությունները իմ ներքնաշխարհին ծանոթացան արվեստասերները: Ուզում եմ ոչ միայն մայրաքաղաքում զարգանա մշակութային կյանքը: Մարզերում էլ հարկավոր է խթանել մշակույթի զարգացումը: Ձեր հարցին, թե որն է իմ ներշնչանքի աղբյուրը, ասեմ՝ կինը, կինը, նորից ու նորից նա, իմ մոսան ու հայրենի բնությունը, մեր երկրի ամեն մի թուփն ու քարը... Այն, ինչ ստանում եմ մեր բնաշխարհից, վերադարձնում եմ իմ ժողովրդին, մեր սերունդներին, որ միշտ բարձր պահեն ու գնահատեն ազգային արժեքներն ու սիրեն...», ասաց Փարավոն Միրզոյանը:

ՄԱՐԻԵՏԱ ՄԻՍԱԿՅԱՆ,
Գյումրի-Երեւան

Արժեւորենք Համաստեղի գրական ժառանգությունը

Համաստեղը «Կարոտի գրականության» ամենանշանավոր դեմքերից է: Երազեց, բայց այդպես էլ հայրենիք չտեսավ: Իր ստեղծագործություններով հայ սերունդներին լսելի էր դարձնում հեռուներից եկող ազգային արժաքների կանչը: Երկու ամիս առաջ Համազգային հայ կրթական եւ մշակութային միությունը ԵՊՀ-ի հետ համատեղ կազմակերպել էին սփյուռքահայ նշանավոր արձակագիր Համաստեղին նվիրված գիտաժողով՝ ներկայացնելով Համաստեղ ստեղծագործողին, հայրենասերին, առանձնացնելով գրական ուղղություններն ու ոճի առանձնահատկությունները: Երեկ ԵՊՀ-ի բանասիրական ֆակուլտետի դահլիճում տեղի ունեցավ Համաստեղին նվիրված գրքի շնորհանդեսը: Ժողովածուում ընդգրկված գրականագիտական ուսումնասիրություններում նորովի վերլուծություններով գնահատվում է գրողի գրական ժառանգությունն ու արդիական նշանակությունը:

«Համաստեղի ստեղծագործական արժեքները հայաստանում նոր են ձեւավորվում: Ունենք ճանաչված նշանավոր գրականագետներ, որոնց հաջար Համաստեղը դարձել է ուղենիշ: Գրքի լույս ընծայումը պատիվ է բերում Համաստեղ ծնած ժողովրդին: Գրում ընդգրկված է Համաստեղի գրական ուղղության շուրջ ծավալված բանավեճը՝ Համաստեղին ճանաչել ոչ թե իրապես հեղինակ, ինչպես կարծում էին նախկինում, այլ նրան դիտել ռոմանտիկ սիմվոլիզմի շաղախով», ասում է «Սփյուռք» գիտաուսումնական կենտրոնի տնօրեն **Սուրեն Դանիելյանը**:

«Հակոբ Կարապետ» կրթաթոշակ ընտրելի ուսանողներին

Ուշ տարի անընդմեջ Համազգային հայ կրթական եւ մշակութային միությունը Հակոբ Կարապետնցի անվան կրթաթոշակի է արժանացնում ստեղծագործող ուսանողներին՝ հույսով, որ գրականությունը կդառնա նրանց կենսաձեւը:

«Կարապետնցը թողել է հարուստ գրական ժառանգություն: Մահից առաջ փոքրիկ գումար էր հաստատել իր անվան հիմնադրամին՝ երիտասարդ գրողներին աջակցելու, խրախուսելու նպատակով», ասաց միության նախագահ **Լիլիթ Գալուստյանը**: Հ. Կարապետնցի անվան կրթաթոշակին արժանացած 20 երիտասարդներ հանրապետության տարբեր բուհերից: Լիլիթ Գալուստյանը հավելեց, որ Համազգայինի 80-ամյակի կապակցությամբ կհրատարակվի ժողովածու, որտեղ կներկայացվեն նաեւ Կարապետնցի կրթաթոշակին արժանացած երիտասարդների ստեղծագործությունները:

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ի պատիվ Տիգրան Գույումճյանի

Բարդ Տեր-Մկրտչյանի խմբագրությամբ «Կոստա Մեսայի Մագդա հրատարակչությունը» (Ֆրեզնո, Կալիֆորնիա) լույս է ընծայել «Փարիզից Ֆրեզնո: Հայկական ուսումնասիրություններ ի պատիվ Տիգրան Գույումճյանի» վերնագրով էսսեների հատոր, տեղեկացնում է «Արմինյան միրոր սփեթեյթր» շաբաթաթերը:

Ուշ հարյուր տասնվեց էջանոց գիրքը երկլեզու է, պարունակում է 37 անգլերեն եւ 9-ը ֆրանսերեն հոդվածներ, որոնց հեղինակները աշխարհի ամենատարբեր երկրներից են՝ Հայաստանից, Ավստրիայից, Բելգիայից, Կանադայից, Դանիայից, Անգլիայից, Ֆրանսիայից, Իտալիայից, Իսրայելից, Իսպանիայից, Հոլանդիայից, Շվեյցարիայից եւ Մ. Նահանգներից: Նրանք ճանաչված գիտնականներ եւ արվեստագետներ են, ինչպես, օրինակ՝ Պիտեր Բալֆյանը, Պիտեր Քաուին, Կլոդ Մութաֆյանը, Մայքլ Սրոնը, Իվ Տերոնը, Քրիստոֆեր Ոտերը, Լեւոն Զումաջանը եւ այլք:

Տիգրան Գույումճյանը Ֆրեզնոյի պետհամալսարանի հայկ եւ Իգաբել Բերբերյանների անվան հայկական ուսումնասիրությունների ամբիոնի վարիչն է եղել 1984-2004 թվերին: 45 տարվա դասախոս, որի հետաքրքրությունների շրջանակը բազմազան է եղել՝ սկսած դասական արվեստից, բյուզանդական պատմությունից եւ հայկական գրականությունից, վերջացրած կինոարվեստով, գեղասպանական հետազոտություններով եւ սարոյանական ուսումնասիրություններով:

Գիրքը, որ բազմավաստակ մշակույթի գործչի 75-ամյակի շեմին է լույս ընծայվել, հնարավոր է եղել տպագրել «Դոյորես Զոհրաբ-Լիթման հիմնադրամի» (Նյու Յորք) հովանավորության շնորհիվ:

Հ. Օ.

Թուրքիայի գրողների պատվիրակության մեջ հայեր էլ են լինելու

2008-ին Թուրքիան է լինելու Մայնի Ֆրանկֆուրտի գրքի տոնավաճառում հյուր երկիրը: «Ընդլայնված գունեղ» բնաբանով մեկնարկող միջոցառումների ծրագիրը հանդիսավորապես բացվելու է հոկտեմբերի 14-ին՝ ձեռամբ Նոբելյան մրցանակակիր Օրհան Փամուկի, ԳԴՀ արտգործնախարար Շթայնմայերի եւ Թուրքիայի նախագահ Աբդուլլահ Գյուլի:

Թուրքական 1000 հոգանոց պատվիրակության կազմում են 350 գրող ու թարգմանիչ, մոտ 100 հրատարակիչ, ավելի քան 300 արվեստագետ՝ երաժշտության, պարի ու թատրոնի ոլորտից: Մոտ 265 միջոցառում է նախատեսված անցկացնել, դրանց մեջ՝ 40 ցուցահանդես, 150 բանավեճ-քննարկումներ, կոնֆերանսներ «Թուրքական արդի գրականությունը», «Կարծիքի ազատությունը եւ փոխադարձությունը հրատարակչական ոլորտում» եւ այլ թեմաներով: Գերմանական «Ֆրանկֆուրտեր ալգեմայնե ցայթունգի» տեղեկացմամբ՝ կքննարկվեն հրատապ խնդիրներ՝ արդիականացում, միգրացիա, թուրքերի եւ թուրքական իսլամի վիճակը Գերմանիայում:

Տոնավաճառում կներկայացվեն 200-ից ավելի նոր հրատարակություններ, կցուցադրվեն թուրքական ֆիլմեր, մանկական հրատարակություններ, կոմիքսներ, գեղագրության (կալիգրաֆիա) ցուցահանդես, նորաձեւություն: Թուրքիային հատկացվող 4000 քմ տաղավարի տարածքում առանցքային դեր է կատարելու «Գրի ճամփորդությունը դեպի Անատոլիա» ցուցահանդեսը:

Գերմանական օրաթերթը հիշատակում է, որ կարծիքի ազատության հարցում դժվար վիճակում է հայտնվելու Թուրքիան. մի երկիր, ուր գրողները բանտարկվում են կամ հալածվում, երբ իրերի, հայկական հարցի կամ էլ ծայրահեղ ազգայնամոլության մասին են խոսում: Տոնավաճառում Թուրքիայի տաղավարի գլխավոր կոորդինատոր Ահմեդ Արին հանիցս շեշտել է ժամանակակից Թուրքիայում իրերի ու հայերի մշակութային ներդրման մասին, իսկ կարծիքի ազատության սահմանափակումը սխալ որակել: Արին անշուշտ հոյարտությամբ է արձանագրել, որ այսօր թուրք որեւէ գրող բանտում չէ՝ չհիշատակելով «Գրողներ բանտում» (Writers in prison) կազմակերպության տվյալները՝ այն է թուրք 10 հրապարակախոս վերջերս մահվան սպառնալիք է սացել: Նրանցից մեկը Նոբելյան մրցանակակիր Օրհան Փամուկն է, գրում է «Ֆրանկֆուրտեր ալգեմայնե»:

Ըստ գերմանական այլ աղբյուրների, Թուրքիայից Ֆրանկֆուրտ ժամանող գրողների պատվիրակության կազմում լինելու են նաեւ հայ գրողներ, որոնց անուններին դեռ չենք հանդիպել:

ԼՈՒԻԶԱ ՀՈՎՍԵՓՅԱՆ,
Գերմանիա

Ինչպե՞ս է գրվել Յալչընի գիրքը

Այս տարվա սկզբներին Գերմանիայում բնակվող թուրք հայտնի գրող Քեմալ Յալչընը գտնվում էր Մ. Նահանգներում՝ հանրությանը ներկայացնելու իր գրքի անգլերեն թարգմանությունը: 383 էջանոց գիրքը կոչվում է «You Rejoice My Heart» («Սիրտս ցեզնով է խայտում») եւ հրատարակվել էր Թեթեյան մշակութային միության անմիջական հովանավորությամբ:

Վերջերս «Արմինյան միրոր սփեթեյթր» շաբաթաթերթի խմբագրի տեղակալ Դեֆենի Արիլը հարցազրույց ունենալով ԹՄՄ-ի հոգաբարձուների խորհրդի նախագահ Մարո Պետրոսյանի հետ, հետեւյալ պարզաբանումներն է կատարել. «Գրքի հրատարակումը լիովին համապատասխանում էր ԹՄՄ-ի նպատակներին եւ առաքելությանը, որը պարունակում է հայկական մշակութային ժառանգության պահպանում եւ փոխանցում սերունդներին:

2003-ին ԹՄՄ-ի Լոս Անջելեսի մասնաճյուղի նախագահ Վայլե Սեմերճյանն ինձ դիմեց հարցնելով, թե արդյոք հնարավո՞ր էր Մ. Նահանգներ հրավիրել Քեմալ Յալչընին: Կարդացի Յալչընի գրքի հայերեն թարգմանությունը եւ երբ կազմակերպեցինք նրա այցը, հարցրեց, թե ինչո՞ւ եւ ի՞նչ հանգամանքներում էր գրել այդ գիրքը: Յալչընը պատասխանեց. «Որպես թուրք ես ինձ չափազանց վատ եմ զգում, որ ոչինչ չգիտեի թուրքական պատմության այս շրջանի մասին: Ամեն ինչ իմացա Գերմանիայում իմ հայ ուսուցչուհի՝ Մելինեից: Հետո գնացի Թուրքիա հավելյալ մանրամասնություններ ձեռք բերելու: Օսմանյան արխիվներից պարզեցի, որ 1915-ին 6-8 մլն մարդ էր ապրում Թուրքիայում, որոնցից 3,5 միլիոնը մահմեդականներ չէին: Վերջիններիս մեծամասնությունը հայեր էին, բայց կային նաեւ հույներ, ասորիներ եւ հրեաներ: Ներկայումս Թուրքիայի բնակչությունը 70 միլիոն է, բայց ոչ մահմեդականների թիվը չի անցնում 200 հազարից: Եթե այդ բնակչությունը նորմալ աճ ունենար, այսօր մոտ 70 միլիոն պետք է լիներ այդ թիվը: Ինչ եղավ նրանց: Ինչո՞ւ են այդքան փչ մնացել: Այս հարցերին պատասխանելիս ես ինձ համար բացահայտեցի ճշմարտությունը, որն ավելի դաժան էր, քան պատկերացնում էի: Որոշեցի այդ մասին պատմել ամբողջ աշխարհին», ասել է Քեմալ Յալչընը:

Ինձ այնքան տպավորեց նրա անկեղծությունն ու խիզախությունը, որ անմիջապես պարտավորված զգացի նախաձեռնելու գրքի անգլերեն թարգմանությունը: Մանավանդ որ Լոս Անջելես, Չիկագո, Դետրոյթ, Բոստոն, Նյու Յորք եւ Նյու Ջերսի կատարած իր շրջագայություններից հետո հետաքրքրությունը նրա գրքի վերաբերյալ գնալով ավելանում էր:

Հովանավորի որոնումների ընթացքում հանդիպեցի Հերման Խինդիրյանին Դետրոյթում, որն էլ իմանալով նպատակս, անմիջապես համաձայնեց հանձն առնել թարգմանության բոլոր ծախսերը: Պետք էր թարգմանիչ գտնել: Այդ հարցում մեզ օգնեց Զորյան ինստիտուտը: Թուրքական լեզուների մասնագետ Պոլ Բեսսեմերը համաձայնեց եւ մոտ մեկ տարի անց գիրքը տպագրվեց հեղինակի համաձայնությամբ», նշել է Մարո Պետրոսյանը:

Հ. Օ.

Վերջին ուղեգիրը ռուսներին

Եվրոպայի նախկին չեմպիոնը շեռնունայն կվերադառնա հայրենիք

Ֆուտբոլի Եվրոպայի առաջնության խառոդ եզրափակիչի վերջին ուղեգիրը բաժին հասավ Ռուսաստանի հավաքականին, որն իր պաշտպանության մեջ առաջին անգամ կարողացավ հաղթահարել խմբային մրցաշարի արգելը: Նման հաջողության համար ռուսներին ավելի հեշտ խաղում միայն հաղթանակ էր անհրաժեշտ: Եվ Գուս Հիդինգի սաները հիանալի կատարեցին առաջադրանքը՝ վերջապես ցույց տալով այն ամենը, ինչին ընդունակ են: Ռուսաստանի հավաքականի առավելությունը մրցակցի նկատմամբ նկատելի էր: Ռոման Պավլյուչենկոյի ու Անդրեյ Արշավինի խփած գոլերը հավաքականին խառոդ եզրափակիչի ուղեգիր պարգևեցին: Ընդ որում, եթե ռուսները գրոհների եզրափակիչ փուլում մի փոքր դիրքերի գնվեին, ապա կարող էին հաղթել խոշոր հաշվով: Շվեդների նկատմամբ ռուսներն անդրանիկ հաղթանակը տոնեցին, որը նրանց պայքարը շարունակելու հնարավորություն ընձեռեց: Այժմ ՌԴ հավաքականին հունիսի 21-ին դժվարին մրցախաղ է սպասում հոլանդացիների հետ:

Գուս Հիդինգ (Ռուսաստան)- Հարցազրույց եմ իմ թիմով եւ այն բանով, թե ինչպիսի առաջընթաց ապրեց հավաքականը մի քանի օրվա ընթացքում: Ֆուտբոլիստներին ասել էի, որ կամ պետք է պայքարեն նեղությունով ողջ ուժերը, կամ էլ հավաքեն ճամպրուկները: Այսօր ֆանտաստիկ խաղ ցուցադրեցինք, ֆուտբոլիստները ձգտում էին առագ գոլ խփել: Միակ բերությունն այն էր, որ չօգտագործեցինք գոլային մի շարք պահերը եւ դեռեւս մինչեւ ընդմիջման գնալը պետք է 2-րդ գոլը խփեինք:

Արշավինը առագորեն վճիռներ կայացնող եւ վտանգավոր պահեր ստեղծող ֆուտբոլիստ է: Նա կարող է շրջանցել ցանկացած պաշտպանի: Ցնայած խաղային փորձի պակասին, նրան ընդգրկեցի կազմում, քանի որ նա ունակ է միայնակ վճռել հանդիպման ելքը: Իսկ մեզ հաղթանակ էր անհրաժեշտ: Հոլանդացիների հետ մրցավեճն ինձ համար առանձնահատուկ կլինի, քանի որ ճանաչում եմ մրցակցի ֆուտբոլիստներին ու մարզչական կազմին: Հոլանդացիները որոշակի առավելություն են ստացել, քանի որ 5 օր հանգստանալու հնարավորություն ունեն:

Լարս Լագերբեկ (Շվեդիա)- Շնորհավորում եմ ՌԴ հավաքականին: Այսօր նրանք գերազանցեցին մեզ: Մեր ֆուտբոլիստները շատ պասսիվ էին: Առաջին խաղակեսի վերջին 5 րոպեներին եւ ավարտական 30 րոպեներին փորձեցինք բարձրացնել խաղի տեմպը, բեկում մտցնել մրցակցությունում, սակայն ոչինչ չստացվեց: Ռուսները մշտապես վտանգավոր պահեր էին ստեղծում: ՌԴ հավաքականը ուժեղ թիմ է, որն իր լավագույն ունակությունները չդրսեւորեց խոյանգիների հետ մրցավեճում: Հիդինգի սաները բոլոր հնարավորություններն ունեն մտնելու նաեւ կիսաեզրափակիչ: Մենք ոռաներին զիջեցինք նաեւ ֆիզիկապես: Հարկ է վերափոխել հավաքականի խաղը ու նախապատրաստվել 2010-ի աշխարհի առաջնության ընտրական մրցաշարին:

«Օ» խմբի մյուս հանդիպումը Իսպանիայի եւ Հունաստանի հավաքականների միջեւ մարզական առումով ոչինչ չէր վճռում: Եվրոպայի նախկին չեմպիոնների համար այդ խաղը միավոր վաստակելու եւ ձեռնունայն հայրենիք չվերադառնալու միակ հնարավորությունն էր: Թեեւ խոյանգիները խաղադաշտ էին դուրս բերել 2-րդ կազմը, հույներին չհաջողվեց գոնե վերջին խաղում պարզերես լինել իրենց երկրպագուների առջեւ: Ճիշտ է, առաջին խաղակեսին խարիսեասը բացեց հաշիվը, սակայն ընդմիջումից հետո Դե լա Ռոնդ ու Գուիսան հաղթանակ պարգեւեցին խոյանգիներին՝ բացելով իրենց գոլերի հաշիվը հավաքականում:

Մրցաշարային աղյուսակ

«Դ» խումբ

	Խ	Հ	Ո	Պ	Գ	Մ
1. Իսպանիա	3	3	0	0	8-3	9
2. Ռուսաստան	3	2	0	1	4-4	6
3. Շվեդիա	3	1	0	2	3-4	3
4. Հունաստան	3	0	0	3	1-5	0

Կազմի ընտրության հարցում թուրքերը լուրջ խնդիրներ ունեն

Այսօր Վիեննայի «Էռնստ Հաբել» մարզադաշտում կկայանա խառոդ եզրափակիչ երկրորդ հանդիպումը Թուրքիայի եւ Խորվաթիայի հավաքականների միջեւ: Մրցակիցները 2-րդ անգամ են Եվրոպայի առաջնություններում հանդես գալու խառոդ եզրափակիչում: Խորվաթները նախկինում այս փուլում խաղացել են 1996-ին, իսկ թուրքը՝ 2000-ին:

Այսօրվա խաղը մրցակիցների 4-րդ հանդիպումն է: Առայժմ մեկ խաղ շահել են խորվաթները, 2 խաղում գրանցվել է ոչ-ոքի: Քառորդ եզրափակիչ այսօրվա խաղում երկու հավաքականներն էլ կազմի ընտրության հարցում դժվարություններ ունեն: Դա հատկապես վերաբերում է թուրքերին: Հավաքականի դարպասապահ Վոլկան Դեմիրելը ՈՒԵՖԱ-ի մարգարեական կոմիտեի կողմից որակազրկվել է 2 խաղով չեխ Յան Կոլերին հարվածելու համար: Ի դեմ, եթե թուրքը պարտվեն խորվաթներին, ապա Դեմիրելը չի մասնակցի նաեւ սեպտեմբերի 6-ին Երեւանում Հայաստանի հավաքականի հետ աշխարհի առաջնության ընտրական մրցաշարի մեկնարկային հանդիպմանը: Թուրքիայի ֆուտբոլի ֆեդերացիան էլ չեխերի հետ խաղում թիմի երկրպագուների, խաղացողների ու մարզիչների վարքագծի համար տուգանվել է 44 հազար եվրոյական ֆրանկով:

Բացի Դեմիրելից, որակազրկման պատճառով հանդիպմանը չի մասնակցի Մեհմետ Սուրելիսը: Չեխերի հետ խաղում ծանր վնասվածք ստացած Էմրե Գյունգերն էլ այլեւս խաղադաշտ դուրս չի գա եվրո-2008-ում: Վնասվածքներ ունեն նաեւ Էմրե Բելեզոյլուն, Սերվետ Չետինը եւ Թյուներ Մեսիրը: Խորվաթներն էլ զրկվեցին Իգոր Բուդանի ծառայություններից, որը ծնկի ծանր վնասվածք է ստացել եւ Իտալիայում պետք է վիրահատվի:

Խորվաթների խաղն առայժմ լավ տպավորություն է թողնում, ուստի պատահական չէ, որ բուքմեյքերները նախապատվությունը տալիս են նրանց: Խորվաթների հաղթանակի գործակիցը 1,90 է, մինչդեռ թուրքերի հաջողության համար խաղադրույքներ են ընդունվում 3,90 գործակցով: Ոչ-ոքին գնահատվել է 3 գործակցով: Սակայն թուրքերն էլ այլի են ընկնում կամային հատկանիշներով եւ նրանց պարտության մասնելն այնքան էլ դյուրին խնդիր չէ: Այնպես որ սպասվում է չափազանց համառ մրցակցություն:

Լարիոնովն ընդգրկվեց փառքի սրահում

Հոկեյի ԽՍՀՄ հավաքականի եւ «Դեսրոյթ Ռեդ Ուինգզ» թիմի կենտրոնական հարձակվող Իգոր Լարիոնովի անունը գրանցվել է հյուսիսամերիկյան հոկեյի փառքի սրահում: Յուսահանչյուր տարի հոկեյի ազգային լիգան հանձնում է փառքի սրահը մարզական կարիերան ավարտած 3-4 անվանի հոկեյիստներով: Անցյալ տարի նման պատվի էին արժանացել կանադացի անվանի հոկեյիստներ Թարկ Մեսյեն, Ռոն Ֆրենսիսը, էլ Մակինիսը եւ Սկոտ Սթիվենսը:

Եվ ահա հերթը հասավ խորհրդային անվանի հոկեյիստ, օլիմպիական խաղերի կրկնակի չեմպիոն, աշխարհի բազմակի չեմպիոն, Սթենլիի եռակի գավաթակիր Իգոր Լարիոնովին: Նրա հետ այդ պատվին են արժանացել Գլեն Անդերսոնը, Ռեյ Սկոմիտելովը եւ էդ Ցինվեսը:

Հյուսիսամերիկյան հոկեյի փառքի սրահը հիմնվել է 1943-ին: Երկու սրահը հիմնվել է 1943-ին: Տարի անց փառքի սրահում գրանցվել են առաջին արժանավորների անունները: Անցած 65 տարիներին այստեղ գրանցվել են մոտ 300 հոչակավոր հոկեյիստների անուններ: 2005-ին նման պատվի հեռմահու արժանացել է խորհրդային եւ համաշխարհային հոկեյի «գերաստղերից» մեկը՝ Վալերի Խարլամովը: Առաջինը խորհրդային հոկեյի ներկայացուցիչներից փառքի սրահում 1974-ին ընդգրկվել է լեգենդար մարզիչ Անատոլի Տարասովը: 15 տարի անց հերթը հասավ դարպասապահ Վլադիսլավ Տրետյակին, իսկ 2001-ին՝ Վյաչեսլավ Ֆետիսովին:

ՕԼԵՐՈՒՄՊԻԱ

Առաքել Միրզոյանն աշխարհի փոխչեմպիոն

Կոլումբիայի Կալի քաղաքում ընթացող ծանրամարտի աշխարհի երիտասարդական առաջնությունում հաջող հանդես եկավ Առաքել Միրզոյանը՝ նվաճելով արծաթե մեդալ: Մինչեւ 69 կգ հաբային ծանրորդների մրցավեճում Միրզոյանը պոկում վարժությունում առաջին մոտեցմամբ բարձրացրեց 133 կգ, ապա երրորդ փորձից իրեն ենթարկեց 137 կգանոց ծանրաձողը: Նա 5 կգ-ով զիջեց լավագույն արդյունքը ցույց տված ռուսաստանցի Օլեգ Չենին եւ արժանացավ արծաթե մեդալի:

Հրում վարժությունում մեդալների համար պայքարն ավելի թեժ էր: Միայն երկրորդ մոտեցմամբ հայ ծանրորդին հաջողվեց հաղթահարել պատվիրված նախնական քաշը (165 կգ), իսկ երրորդ մոտեցման ժամանակ նա չկարողացավ բարձրացնել 170 կգ-ը: Այս վարժությունում էլ Միրզոյանն արժանացավ արծաթե մեդալի՝ ոսկին զիջելով կոլումբիացի Միգել Լոտիս Պինեդային: Երկամարտի 302 կգ արդյունքով Առաքելը դարձավ աշխարհի փոխչեմպիոն՝ 5 կգ-ով զիջելով ուժեղագույնը ճանաչված Օլեգ Չենին: Տեղեկացնենք, որ 18-ամյա Առաքելը օլիմպիական չեմպիոն Օգսեն Միրզոյանի որդին է:

Առաջատարը ՖԻՄԱ-ն է

Շախմատի Հայաստանի ակումբային առաջնությունում երկրորդ հաղթանակը տոնեց «Բանկերի արքա»՝ 4,5-1,5 հաշվով պարտության մատնելով «Հրազդանին»: Այս անգամ թիմի հաղթական ապահովեցին Հարությունյանը, Արաբեւ Մինասյանն ու Աշոտ Անասասյանը՝ առավելության հասնելով մրցակիցների նկատմամբ:

«Միկան» մրցաշարում առաջին հաղթանակը տոնեց՝ 5-1 հաշվով պարտության մատնելով «Երեւանին»: Վերջինիս կազմում միակ միավորը թիմին պարգեւեց Թովմասյանը՝ առավելության հասնելով Լահոնյի նկատմամբ: Մյուս պարտիաներում Ջորքավան հաղթեց Պողոսյանին, Պետրոսյանը՝ Գեւորգյանին, Փաշիկյանը՝ Մանուկյանին, Արա Մինասյանը՝ Ինանցին, Լիլիթ Մկրտչյանը՝ Թամազյանին:

Երկրորդ տուրում էլ հաջող խաղացին ՖԻՄԱ-ի շախմատիստները՝ 4-2 հաշվով պարտության մատնելով «Գյումրիին»: Հենց ՖԻՄԱ-ն էլ 2 տուրից հետո բոլոր պարտիաներում վաստակած առավելագույն միավորների (9) շնորհիվ գլխավորում է աղյուսակը: Առաջատարին մեկ միավոր է զիջում «Բանկերի արքա»: 7,5 միավոր ունի «Միկան»:

Վաղեմի մրցակիցները կմրցեն Բիլբաոյում

Սեպտեմբերի 1-13-ը Լեւոն Արոնյանը կմասնակցի իսպանական Բիլբաո քաղաքում կայանալիք շախմատի Գրան պրիի մրցաշարին: Նրա մրցակիցների թվում կլինեն Վիշվանաթան Անանդը, Վասիլի Իվանչուկը, Մաքսիմ Կաուլսենը, Վեսելին Թոփալովն ու Թեյմուր Ռաջաբովը: Մրցաշարի մրցանակային ընդհանուր հիմնադրամը 400 հազար եվրո է, որից 100 հազարը կստանա հաղթողը:

Չեմպիոն՝ 22 տարվա ընդմիջումից հետո

22 տարվա ընդմիջումից հետո «Բոստոն Սելթիկսը» կրկին նվաճեց ԱՄՆ-ի բասկետբոլի ազգային ընկերակցության չեմպիոնի տիտղոսը՝ եզրափակիչի վեցերորդ խաղում 131-92 հաշվով պարտության մատնելով «Լոս Անջելես Լեյկերսին»: Այդ խաղում հաղթողների կազմում ամենաարդյունավետ խաղացողներն էին Գարնեթն ու Ալենը, որոնք 26-ական միավոր վաստակեցին: Մրցակցի կազմում իր թիմին 22 միավոր պարգեւեց Կոբի Բրայանը: Եզրափակիչ հանդիպման լավագույն խաղացող ճանաչվեց «Բոստոն Սելթիկսի» բասկետբոլիստ Պոլ Պիրսը:

Հույն 11 ծանրորդներ որակազրկվել են

Արգելված խթանիչների օգտագործման համար ծանրամարտի միջազգային ֆեդերացիան 2 տարով որակազրկել է հույն 11 ծանրորդների: Մարտին անցկացված դոպինգ-սուգումը դրական արդյունք էր տվել: Հունաստանի հավաքականի անդամները Չինաստանից ստացած վիտամիններ էին օգտագործել, որոնք թվում է նաեւ ծանրամարտի հավաքականի մարզիչ Խրիստոս Իակովը:

Կրճատվել է նաեւ Հունաստանի հավաքականի անդամների թվաքանակը Պեկինի օլիմպիական խաղերում: Հույները 8 ուղեգիր էին նվաճել (5 տղամարդ, 3 կին), սակայն նրանց թույլատրվել է օլիմպիական մրցաշարքում դուրս բերել ընդամենը 4 ծանրորդի (3 տղամարդ, մեկ կին):

Հոլանդացիների մարզահագուստը մեծ պահանջարկ ունի

Հոլանդիայի հավաքականի տպավորիչ ելույթները եվրոպայի առաջնությունում ֆուտբոլասերների շրջանում մեծ հետաքրքրություն են առաջացրել մարզաշապիկների եւ ֆուտբոլային այլ հանդերձանքի նկատմամբ: Հոլանդիայի որոշ քաղաքներում պահանջարկն այնքան մեծ է, որ խանութները սպիտված են պատվերների լրացուցիչ խմբաքանակ պատվիրել հարեւան երկրներից: Օրինակ՝ գերմանական Էսեն քաղաքի Karstadt խանութների ցանցը Հոլանդիայից 500 մարզաշապիկի պատվեր է ստացել, ընդ որում գինը ոչ մի նշանակություն չունի:

Գերմանիայում էլ, թեեւ հավաքականի ոչ այնքան տպավորիչ ելույթներին, ֆուտբոլային հանդերձանքի պահանջարկը փոքր չէ: Առավել մեծ պահանջարկ ունեն Գերմանիայի հավաքականի խորհրդանշանով մարզաշապիկներն ու մրցաշարի պաշտոնական գնդակը:

Ամենաանհաջող առաջնությունը

Ֆրանսիայի հավաքականի համար եվրոպայի 13-րդ առաջնությունն ամենաանհաջողն էր: Ֆրանսիացիները վաստակեցին ընդամենը մեկ միավոր եւ գնդակների 1-6 տարբերությամբ եզրափակեցին «Շ» խմբի աղյուսակը: Եվրոպայի կրկնակի չեմպիոնները երկրորդ անգամ չհաղթահարեցին խմբային մրցաշարի արգելը: Առաջին անգամ նրանք անհաջողության էին մատնվել 1992-ին: Վաստակելով 2 միավոր, Ֆրանսիայի հավաքականը խմբում զբաղեցրել էր 3-րդ տեղը գնդակների 2-3 տարբերությամբ:

Էջը պատրաստեց ԱՇՈՏ ԽԱՉԱՏՐՅԱՆԸ

Hyundai EURO FanTastic

Հյունդայի Մոթոր Քոմփանին
Euro-2008-ի
գլխավոր հովանավոր

Hyundai ընկերության Հայաստանում ոլորտնական միակ ներկայացուցիչ
«Մագաս Ինվեստ» ՓԲԸ-ն
Եվրոպայի սպորտային ամենաթեժ իրադարձության առթիվ
Հայաստանի ֆուտբոլասերներին առաջարկում է *3% զեղչ* Hyundai մակնիշի
բոլոր ավտոմեքենաների համար, *կան նաեւ հետաքրքրական, գրավիչ* **նվերներ**

Սա՛ է իսկական առիթը

26 27 ՀՈՒՆԻՍԻ
Marriott ARMENIA YEREVAN
ԱՐՄԵՆԻԱ ՄԱՐԻՈՏ ՀՅՈՒՐԱՆՈՑԱՅԻ ՀԱՍԱՐ

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄՆԵՐ
UTE Ինֆորմացիոն տեխնոլոգիաների ձեռնարկությունների միություն
Հայաստանի բանկերի միություն
Հայաստանի գործատուների (արդյունաբերողների եւ գործարարների) հանրապետական միություն

Բիզնեսի եւ տեխնոլոգիաների երկխոսություն

ՀՀ Վարչապետի բարձր հովանու ներքո | համագործակցությամբ՝ Սայբերսոֆթ Արմ եվ Microsoft

digitecbusiness FORUM 08

Տեղեկատվական տեխնոլոգիաները առօրյա բիզնեսում

Հեռ.՝ (010) 548881, Բջջ.՝ (091) 248881, Էլ-փոստ՝ info@digitec.am, URL: www.digitec.am

ԻՆՖՈՐՄԱՑԻՈՆ ՀՈՎԱՆԱՎՈՐՆԵՐ
ереван | Delama.am | Деловой Экспресс
ԳԼԽԱՎՈՐ ԻՆՖՈՐՄԱՑԻՈՆ ՀՈՎԱՆԱՎՈՐ MEDIASTYLE
168.am

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ
Էքսպորտային վարկերի միջոցով ABC Klima եւ այլ կլիմատիզացիոն համակարգերի ձեռքբերում եւ ներդրում

Տրամադրվում են վարկեր Հայաստանի Հանրապետությունում եւ ԼՂՀ-ում բազմաբնակարան շենքերի, առանձնատների, գրասենյակային համալիրների կլիմատիզացիայի (տաքացման, սառեցման, օդորակման, միկրոկլիմայի կարգավորման) համակարգերի ձեռքբերման, ներկրման եւ տեղադրման նպատակով:
Վարկերը տրամադրվում են տարեկան մինչեւ 10% տոկոսադրույքով:
Մարման ժամկետը 6-7 տարի:
Մանրամասների համար կարող եք զանգահարել +37410 54-89-36 կամ +37494 366-989

www.azg.am

Ստելություն-Օրվա կարգախոսը

1-ին էջից

Սակայն իրականությունը այն է, որ հակահայ քարոզչություն տանող քաղաքական ուժը, որ քարոզում է ընդդեմ ազգային արժեքների՝ միասնության, ոչեսական մտածելակերպի, հայ առաքելական եկեղեցու, եւ այսպես շարունակ, բավականին լուրջ աջակցություն ունի բնակչության մի զգալի հատվածի մեջ: Կարծում եմ, նման աջակցության համար նրանք՝ լեռնականները, պետք է շնորհակալ լինեն Հայաստանում տարիներ շարունակ թալֆալական քաղաքականություն վարող իշխանավոր կոչվածներին, որոնք, նկատենք, իրականության մեջ նրանց (լեռնականների) սանիկ-աշակերտներն են, որոնց նրանք են առաջ քաշել, սեփական քաղաքական մակաբույծ լինելը արդարացնելու համար: Ու հիմա, տարիներ անց, ցանկանում են «ընդամենը» հետ վերադարձնել ժամանակին սիրողաբար ուրիշին տվածը՝ իշխանությունը, եւ այս ամենը արվում է այնպիսի լկտիությամբ, որ պարզ չէ, թե այսօր Հայաստանում կա՞ մեկը, որ հաշվի առնի՝ բնակչությունը ցանկանո՞ւմ է մեկին կամ մյուսին, կամ թե արդյոք ժողովուրդը չի՞ հոգնել այս ամենից եւ ընդամենը ցանկանում է արդարություն ու աշխատելու հնարավորություն, մի բան, որ այդպես էլ չստեղծվեց մեր նորանկախ պետությունում նրա գոյության 17 տարիների ընթացքում: Ու այսօր համառորեն վերադառնալ ցանկացող հինը, որն այդպես էլ չստեղծեց Հայաստանում մարդու իրավունքների պաշտպանության թեկուզ եւ տարրական պայմաններ, խոսում է նույն այդ մարդու իրավունքներից, ու հաստատում, թե ինքն է միակ ուժը, որը կարող է ինչ-որ բան փոխել: Ու քանի դեռ հայրենի իշխանությունները շարունակում են ոչինչ չանել լուրջ գաղափարական ու քաղաքական բարեփոխումների ուղղությամբ, հասկանալի է, որ այս պայմաններում կլինեն շատերը, որ սխալված լինեն հավատալ նրանց՝ լեռնականներին, իսկ մյուս մասը կնախընտրի հեռանալ երկրից:

Ինչեւէ, պարզ է մի բան, առկա ճգնաժամը կամ բարդությունը Հայաստանում կետի դեռ երկար, իսկ սա այն է, ինչ ձեռնտու է Հայաստանը բեւեռացած քաղաքական երկու ուժերին էլ: Վերջիններս կշարունակեն միմյանց գոյությունը արդարացնել դիմացինի առկայությամբ եւ իրար վրա ցեխ շպրտել, ամեն անգամ վկայակոչելով միջազգային այս կամ այն ասյանն ու նրա այս կամ այն որոշումը Հայաստանի ներքաղաքական զարգացումների մասին: Ու ոչ մեկի մտքով անգամ չի անցնի, որ միմյանց կոկորդ կրծող քաղաքական երկու բեւեռները Հայաստանը վաղուց արդեն վերածել են ԵԱՀԿ-ի կամ ԵԽԽՎ-ի համակարգում ինչ-որ չինովնիկի անձնական օգտագործման տարածքի, որտեղ վերջինս տիրոջ իրավունքով գալիս է սուզելու, թե արդյոք վասալները իր հրամանները կատարո՞ւմ են եւ ի՞նչ ճշտությամբ: Իսկ վասալները իրենց հերթին մեկը մյուսից առաջ ընկնելով՝ տիրոջ առաջ արդարանում կամ բողոքում են միմյանցից, իսկ չինովնիկի օգնականի տեղակալը քթի տակ ֆնթիթաղ տալով թփթփացնում է նրանց ուսերին՝ ամեն մեկին խոսանալով, որ վերադառնալուն պես նրանց համար ընդունելի որոշում կիրառարակի: Հայաստանի վասալական կախվածությունը մեծանում է, մեր երկիրը օր օրի կորցնում է իր ինքնիշխանությունը եւ վերածվում հերթական գվինեաբիսաուի, միայն թե հարավկովկասյան լցոնմամբ:

Իսկ ասելությունը դեռ երկար ժամանակ կշարունակի մնալ մեր քաղաքական դաշտի հիմնական կարգախոսը, ինչն առաջ կմղի այս կամ այն կողմին իշխանազավթման կամ այն ամեն գնով պահպանելուն, սակայն ներկա պայմաններում վսանգավորը դա չէ, այլ այն, որ ասելությունը սպառնում է Հայաստան պետության գոյությանը:

Մրցույթի հրավեր

ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի հայաստանյան գրասենյակը հայտարարում է մրցույթ շահույթ չհետապնդող կազմակերպությունների միջեւ՝ **«Ինստիտուցիոնալ օժանդակություն բազմաբնակարանային շենքերի կառավարման մարմիններին՝ էներգաարդյունավետության բարելավման եւ կայուն ջեռուցման եւ տաք ջրամատակարարման համար»:**

Մրցույթի մանրամասն հրավերին կարելի է ծանոթանալ www.undp.am եւ www.heating.nature-ic.am ինտերնետային կայքերից կամ ձեռք բերել տպագիր տարբերակը ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակի պահակային ծառայությունից՝ 14 Պ. Աղամյան հասցեով:

Հայտերն անհրաժեշտ է ներկայացնել ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակի պահակային ծառայություն մինչեւ հուլիսի 4-ը, ժամը 17:00-ը:

Մահազդ

Համազգայիններս խոր վշտով հայտնում ենք սիրելի

ՍԵԴԱ ՍԱՐԳՍԻ ՀԱՄԱՍԱՍՊՅԱՆ-ՍԱԽԿԱԼՅԱՆԻ

մահը:

Հոգեհանգիստը՝ այսօր, ժամը 18-ին, Մարշալ Բաղրամյան 1 հասցեում:

Հուղարկավորությունը՝ հունիսի 21-ին, ժամը 14-ին, նույն վայրից:

Այս տխուր առիթով **«Ազգ»-ի** խմբագրությունը ցավակցում է հանգուցյալի որդուն՝ պարոն Եղիշե Համազասյանին եւ մյուս բոլոր հարազատներին:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Էքսպորտային վարկեր Սլովակիայից

Տրամադրվում են վարկեր Հայաստանի Հանրապետությունում եւ ԼՂՀ-ում ՀԷԿ-երի կառուցման եւ շահագործման համար նախատեսված սարքավորումների ձեռքբերման եւ ներմուծման նպատակով:
Վարկերը տրամադրվում են տարեկան մինչեւ 10% տոկոսադրույքով:
Մարման ժամկետը 6-7 տարի:
Մանրամասների համար կարող եք զանգահարել +37410 54-89-36 կամ +37494 366-989

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Հունիսի 25-ին, ժամը 15.00-ին ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի նիստերի դահլիճում (Մարշալ Բաղրամյան պող. 24 գ.) Հայաստանի բյուզանդագիտական ուսումնասիրությունների կոմիտեն հրավիրում է իր անդամներին եւ անդամագրել ցանկացողներին հերթական նիստի:

ԿՈՄԻՏԵ

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ՀԱՆԵՔԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լուսանկարները՝ Արամ Գրիգորյանի: Տպագրվում է «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետության 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրված՝ 17.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աբեղիմեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրված է տպագրության՝ 19.06.2008, գինը՝ 100 դրամ, տպագրում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում՝ Արշակունեաց 2: